




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սրահանել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԳՐԶԱԿՆԵՐԸ ՓԱՍՏԵՐԻ ԱՌՋԵԻ

Գ Ր Է Գ
ՍԻՄ . ՓԻՐՈՒՄԵԱՆ

ԳԻՆ 20 ՍԵՆԹ



Հրատարակութիւն «ԳԻՏ-ԴԱՍ» Հրատ. Ընկերութեան
«Git-Das», P. O. Box 62, Mads. Sq. Sta.
New York, N. Y.

1 9 2 4

"GIT-DAS" PUB. CO.
P. O. BOX 62, MAD. SQ. STA.
NEW YORK, N. Y.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ընկեր Ալ. Մարտունիի փոփոխական գրութիւնը՝ ուղղուած «Գաղութահայ Աշխատանքութեան», բաւական խոշոր իրարանցում առաջացուց դաշնակներու «գրական» փեթակին մէջ:

Այդ իրարանցումը ինքնին լաւագոյն ապացոյցն էր, որ Ընկեր Մարտունիի դիտողութիւնները Դաշնակցութեան վերաբերմամբ տեղին էին եւ հարւածները՝ զօրաւոր:

Ընկեր Մարտունի Դաշնակցութեամբ չէր զբաղւած իր դիմումին մէջ, այլ միայն անցողակի կերպով մէկ-երկու անհրաժեշտ եւ անդարացի դիտողութիւններ էր ըրած, որոնք ինչքան ալ խոցող ու խայթիչ եղած լինէին դաշնակներուն համար, սոսկ Մարտունիի տեսակէտները չէին, այլ ամեն անոնց, որոնք տեսնելու կարողութենէն զրկւած չեն, եւ կըրնան իրողութիւնները արձանագրել անկեղծաբար ու անվախ կերպով:

Ընկեր Մարտունիի դիմումին ընդհանուր բնոյթը եւ հակիրճութիւնը թոյլ չեն տւած, որ պատմական փաստերու մատնանշումներով, բազմակողմանի կերպով դաշնակներու «լռութիւնը, անկու՛տութեանութիւնը, կեղծիքը, նենգութիւնը», եւայլն լուսաբանւէին, եթէ երբէք ատոր պէտք կար:

Բարեբախտաբար թէ դժբախտաբար դաշնակ *լաքէյները* եւ կեղծարարները Ընկեր Մարտունիի «Գաղութահայ Աշխատանքութեան» գրքոյկի առիթով անգամ մըն ալ եկան Դաշնակցութեան «առաքինութիւնները» ցուցադրելու շատ ակնաբաղիւ կերպով: Այդ իր կարգին լաւագոյն առիթը եղած է Ընկ. Սիմ. Փիրումեանի համար՝ պատմական անմեծելի իրողութիւններու եւ «թարմ» կեղծիքներու մերկացումով դաշնակ «գրական *էլիտէյի*» իսկական դիմագիծը տալու եւ այդ կուսակցութեան «ազգային», «կու՛տութեան», «դիւանագիտական» արժէքները պատկերացնելու ընթերցողներուն:

Թէ որքան յաջող եւ կարող կերպով կրցեր է ընել այդ Ընկ. Փիրումեան իր այս գրութեան մէջ, որ վարպետ վերլուծութեան, խայթող *սարքազմի*, համբերատար, բայց ոչնչացնող ընդդիմախօսութեան փայլուն մէկ օրինակը կներկայացնէ, այդ պիտի տեսնեն ընթերցողները իրենք:

ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆԵՐ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԳՐԶԱԿՆԵՐԸ ՓԱՍՏԵՐԻ ԱՌՋԵԻ

Ա

ՎԻՐԱԻՈՐԻԱԾ ԱՆՄԵՂՈՒԹԵԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Ընկեր Ա. Մարտունու (Ա. Մեսանիկեանի) գրութիւնը՝ ուղղւած՝ ամերիկահայ բանւորներին եւ աշխատաւորներին, մեծ «կենդանութիւն» առաջ բերաւ դաշնակցական բոյնի մէջ:

Դաշնակցական երկու թերթերի՝ «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ի խմբագրութիւնները հրապարակ եկան անվերջօրէն երկար «յօդւածներով»^{*}): Կուսակցութեան «լաւագոյն» գըրիչները բաւականաչափ խաղիւղեցին խեղճ թղթի վրա, որը, ինչպէս յայտնի է «ամեն ինչ տանում է»: Եւ թափեցին սեւ մեկանի հեղեղներ...


Թէ ինչ թափւեց իրապէս, այդ կտեսնենք մենք՝ յետո:

Ի՞նչն է սակայն, որ առաջ է բերել այդ «կենդանութիւնը». եւ ինչի՞ դէմ է, որ այդքա՛ն կրքոտ կերպով նիզակներ են ձօճում կուսակցութեան երկու օրգանները եւ նրանց խիստ եռանդուն աշխատակիցները: Դուրս է գալիս, որ կօմունիստները ընդհանրապէս եւ ընկեր Ա. Մարտունին մասնաւորապէս «ֆէմփէյն մը» սկսած են Դաշնակցութեան դէմ: Իսկ «Ասպարէզ»ը ձայնակցելով «Հայրենիք»ին, նոյն իսկ ջանք է գործ ածում ասպացուցելու (անշուշտ, առանց որեւէ արդիւնքի) որ Սովետական Հայաստանի Կառավարութեան ցուցահանած չահագորգութիւնը գաղութային հայութեան հանդէպ միայն մէկ նպատակ է հետապնդում. այն է՝ վերջ տալ Դաշնակցութեան:

Ահա ձեզ իրապէս մի «Ամերիկայի գիւտ»... Ամերիկայի մէջ:

Համարեա քսանեւհինգ տարի կա, որ հայ մարքսիստական, սօցիալիստական ինչպէս եւ կօմունիստական տարրերը «ֆէմփէյն» են մղում Դաշնակցութեան դէմ եւ պիտի մղեն այնքան ժամանակ, մինչեւ որ այդ բուրժուա-ֆաղֆեցիական գաղափարաբանութեան վերջին ներկայացուցիչները յանձնուին թանգարանին կամ աւելի ճիշտ՝ պատմութեան արխիւի մէջ նետուին:

(*) Տես «Հայրենիք», թիւ 3554-3558, եւ «Ասպարէզ», թիւ 1042-1048:



Միթէ՞ յարգելի խմբագրութիւնների համար մի նորութիւն է այդ, որ պէտք է թմբկահարութեամբ եւ բալագանային հերոսի ծամածռութիւններով ամբողջ աշխարհին յայտնուէր:

«Ապա նայեցէ՛ք, տեսէ՛ք այդ բօլշեւիկները ի՞նչպիսի չար երեխաներ են եւ ինչպէս խեղճ, անմեղ դաշնակցական մանուկներին ծեծում ու վիրաւորում են»:

Արդեօք այս արտասւտութիւնը կատակերգութեան հեղինակները պիտի կարողանա՞ն շարժել մեր սրտաբեկ հայրենակիցների խղճահարութիւնը Ամերիկայում, — մենք չգիտենք. թէեւ շատ պատճառներ ունինք կասկածելու: Ի՞նչ դրամական գործողութիւն կա թագնւած այդ տանջահար կեցւածքի ետեւը՝ յօգուտ «անարդարօրէն վիրաւորւած Դաշնակցութեան», — այդ էլ մեզ յայտնի չէ հիմա, թէեւ որեւէ կասկած չունինք, որ ֆինանսական որեւէ մի օպերացիա թագնւած է այդտեղ^{*}): Սակայն մի բան պարզ է եւ որոշ. հարցը դրանումը չէ, հարցը «ֆէմիէյն»ի մէջ չէ, որովհետեւ դաշնակցական առաջնորդները չեն կարող չիմանալ այն, ինչ որ յայտնի է ամեն դրել-կարդալ իմացող մարդու: Հարցը նրանումն է, որ ինչպէս ժողովուրդն ասում է, մեղուները շատ յուզում եւ չարանում են, երբ նախագգում են իրենց վախճանը: Ահա՛ անսպասելի յուզումի իրական պատճառը. ահա՛ թէ ինչո՞ւ այնքան խառնակւել է փեթակը:

Աւելորդ պիտի լինէր գաղտնիքը ուրիշ տեղ որոնել:

Բայց ամենից աւելի ծիծաղելին այն է, որ ընկ. Ա. Մարտունու եւ բօլշեւիկների բարկացած քննադատները շատ թուղթ են փչացնում, ջանալով «այսպէս կամ այնպէս» «լուսաբանել» կօմունիստների այնքան թշնամական վերաբերութեան պատճառը իրենց հանդէպ. մինչդեռ այդ պատճառը եւս նրանց յայտնի է վաղուց: Մենք մի ամբողջ քառորդ դարու ընթացքում երբէք չենք ծածկել մեր «համակրանքը», ու պատրաստ ենք նորից կրկնելու հայ աշխատաւոր զանգւածի առջեւ, ուր էլ որ նրանք գտնւելու լինին, երկրում թէ արտասահմանում, Ամերիկայում թէ Եւրոպայում, որպէսզի այլեւս ոչ մէկ կասկած չմնա եւ դաշնակցական խմբագիրներին պէտք չմնա խաղալու «վիրաւորւած անմեղութեան» կատակերգութիւնը:

«Ասպարէզ»ի յօդւածի հեղինակը նոյն իսկ փորձ է անում

(*) 10,000 «գաղթականներ Հայաստան փոխադրելու» համար սկսած հանգանակութեան անպատկառ կեղծիքը, — ահա՛ այդ քաղցնւած օպերացիան: (Ծանօթ. Հրատարակիչ.):

«բացատրելու» բօլշեւիկներին վերաբերմունքը դաշնականների հանդէպ՝ «Քաջագոնունու միջոցով» . այդ միանգամայն աւելորդ է : Եթէ դաշնակցական գաղափարաբանութեան այն փայլուն բնօթագիրը , որ տւել է ընկ . Ա . Մեասնիկեանը եւ որը մէջ է բերւած դաշնակցական երկու յօդւածագրների կողմից էլ , բաւականաչափ համոզիչ չէ , որպէսզի ամեն ազնիւ մարդու համար պարզ դառնա Դաշնակցութեան դէմ կրուելու անհրաժեշտութիւնը «մինչեւ վերջ» , ապա մենք յանձն կառնենք այստեղ կրկին անգամ «խնդրի էութիւնը» ցուցադրելու , ջանալով որքան կարելի է հասկանալի լինել մեր արտայայտութիւններում :

Իր գործունէութեան երեսուն տարւա ընթացքում Դաշնակցութիւնը եղած է հայ բուրժուազիայի իմպերիալիստական մասի կուսգան կազմակերպութիւնը :

Ինչպէս յայտնի է իմպերիալիստական ախորժակներից զերծ չեն նաեւ այսպէս անւանւած «փոքրիկ» ժողովուրդները : Իրապէս հայ բուրժուազիան եղած է Տաճկաստանում անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի ավանգարդը եւ ներմուծողը . իսկ Կովկասում՝ ռուսական կապիտալի , — առանձնապէս մանուֆակտուրային եւ նաւթային , — առաջապահը :

Հայ զանգւածների ազգային-ազատագրական ձգտումները նրանց կողմից վճռւում էին հենց այդ իմպերիալիզմի գիտելակերպով , դրա թելադրութեան տակ . դրա համար էր հենց որ ժողովրդին բաժին ընկան անհաւատալի տանջանքներ եւ թշւառութիւններ , որոնք համարեա թէ հասցրին նրան ազգային վերածնութեան առարկայական կարելիութիւնների ոչնչացման կէտին : «Ազատութեան եւ անկախութեան» դրօշակը շարժելով օդի մէջ , Դաշնակցութիւնը կարողացաւ նրա տակ ժողովել քաղաքային մանր բուրժուազիայի եւ գիւղացիութեան մասաները , շահագործելով նրանց ազատագրական ձգտումները եւ ենթարկելով դրանց կապիտալի ու նրա կրողների շահերին :

Կուսակցութեան շարքերի մէջ մեծ քանակութեամբ գիւղացիների , ինտելիգենցիայի եւ քաղքեցիութեան ներկայութիւնը (այս տարրերը սկսած են թողնել կուսակցութիւնը պատերազմի սկզբից եւ առանձնապէս Յեղափոխութիւնից յետո) կուսակցութեան ստիպեց ներկւել «պաշտպանողական» նպատակ ունեցող սօցիալիստական դոյնով . բայց կարմիր ծածկոցը երբէք չկարողացաւ ծածկել աղւէսի պոչը եւ բուրժուազիայի գայլային ժանիքները , որոնք դաւաճանական կերպով դուրս էին նայում օտարից փոխ առնւած ծածկոցի ծակոտիկներից :

Այսպիսով Դաշնակցութեան գաղափարաբանութիւնը հայ

բուրժուազիայի ամենաագրեսիւ մասի գաղափարաբանութիւնն էր: Ընկ. Ա. Մեասնիկեանը շատ պերճախօս կերպով բնութագրել է բուրժուա-քաղքեցիական գաղափարաբանութեան այդ «բազմաբղէտութիւնը». մեր կողմից պէտք չկա կրկնելու:

Այս այսպէս լինելուց յետո, ինչո՞ւ զարմանալ եւ անակնկալ համարել, երբ հայ բանւորական դասակարգի ու ամենաաղքատ գիւղացիութեան կուսակցութիւնը, — առաջ սօցիալ-դեմոկրատական, յետո կոմունիստական, — նրա դէմ վճռական կռիւ է մղում եւ արդարացի կերպով երկրնտրանքն է առաջադրում՝ «կա՛մ կոմունիստները, կամ դաշնակները»:

Ի՞նչ կա դատապարտելի, երբ Բանւորա-Գիւղացիական Հայաստանի ղեկավարները ազատելով այդ երկիրը դաշնակների բուրժուական տիրապետութիւնից, որ այնքա՛ն չարիքներ է հասցրել նրան, զգուշացնում են Ամերիկայի հեռւոր գաղութի հայրենակիցներին այդ բռնակալներից. չէ՞ որ դրանք հայ ժողովրդի համար անէծք են դարձել եւ որեւէ հող ոտքերի տակից կորցնելով ու դուրս նետւելով այնտեղից, իրենց խայտառակ արարքները այսօր շարունակում են արտասահմանում:

Կա՛մ բանւոր դասակարգը գիւղացիութեան հետ եւ կամ բուրժուազիան. կա՛մ կոմունիստները եւ կամ դաշնակները: Այսպէ՛ս է կեանքի կողմից առաջադրւած երկրնտրանքը:

Դաշնակցական թերթերի «գրողները» որքան ուզում են կարող են տրտնջալ Ընկեր Ա. Մարտունու դէմ. սակայն այդ երկրնտրանքի «հնարողը» նա չէ: Դա առաջադրւած է արդէ կապիտալիստական հասարակութեան դասակարգային ամբողջ հակասութիւնների կողմից եւ, ինչպէս Եւրոպայի յետպատերազմական փորձը ցոյց է տւել, ունի մէկ հատիկ լուծում. այն է՝ խորտակել բուրժուազիայի տնտեսական եւ քաղաքական տիրապետութիւնը եւ այդպիսով ձերբազատել աշխատաւոր մարդկութեան ամբողջ ստեղծագործ ու արտա-

Պրօլետարիատ եւ բուրժուազիա. Կոմունիզմ եւ Դաշնակցութիւն, — սրանց միջեւ չկան շօշափման եզրներ. սրանք հակոտնեաներ են:

Եւ միանգամայն աւելորդ կերպով է բարկանում «Ասպարէզ»ը, երբ նա խօսում է «միամիտ» մարդկանց մասին. այդպիսի «միամիտներին» «Ասպարէզ»ը պէտք է որոնէ սեփական շարքերի մէջ, որովհետեւ կոմունիստները չեն, այլ դաշնակները, որ Ռիգա պատւիրականներ են ուղարկել «բանակցութիւնների» համար՝ Սօվետական Իշխանութեան ներկայացուցիչների հետ. յետո Գենօվա՝ Ընկ. Զիչերինի մօտ. յետո (տակաւին մի քանի ամիս սրանից առաջ) ինքը «պատասխա-

նատու կօմիտէն» կրկնած է այդ փորձը . այս անգամ . . . Բերլինում :

Եւ ամեն անգամ նրանց պատասխանել է այնպէս , ինչպէս Դրօյին կովկասում . «Նախ հրաժարեցէք դաշնակցական մտայնութիւնից , նախ դադարեցէք (եթէ երբէ՛ք կարելի է այդ) լինել կապիտալի ծառան , այն ժամանակ կընդունուիք աշխատաւոր ժողովրդի ընտանիքի մէջ» :

«Ո՞րտեղից է այս ատելութիւնը Դաշնակցութեան հանդէպ» — զարմացած հարցնում են դաշնակ թերթերի «միամիտ» հրապարակախօսները :

Հարցրէ՛ք առաջին իսկ պատահած բանւորին կամ գիւղադրող ուժերը :

ցուն եւ նա ձեզ կպատասխանի թէ որտեղից է գալիս ատելութեան այդ դգացումը հանդէպ իր գործարանատիրոջ կամ կալւածատիրոջ եւ կամ աւելի ճիշտ՝ հանդէպ բոլոր գործատէրերին եւ կալւածատէրերին . դասակարգային կռւի ըգգացումը բնական եւ անհրաժեշտ ներքին տրամադրութիւն է բուրժուական Դաշնակցութեան դէմ , նոյն իսկ չնայած նրան , որ դա տապալւած է եւ իր վերջին օրերն է ապրում : Դասակարգային համակրանքները , ինչպէս յայտնի է մեծ հետեւողականութիւն ունին իրենց մէջ եւ հաստատուն են :

Երբէք պէտք չունին «Ասպարէզ»ն ու «Հայրենիք»ը հանելուկներ հնարելու , Քաջազնունու «ստւերը» օգնութեան կանչելու եւ կամ կօմունիստների սրտերի խորերը թափանցելու :

Ամեն ինչ պարզ է առանց այդ դժւարին եւ ապարդիւն աշխատանքների եւս :

Բայց երկու յարգելի խմբագրութիւնները կօմունիստների դէմ զայրանում են ոչ միայն նրա համար , որ դրանք մերկացնում են դաշնակներին ամերիկահայ բանւորների առջեւ , այլ եւ այն «միջոցների» համար , որ գործադրում են «նենպամիտ» բօլշեւիկները այդ կռւի մէջ :

«Չեկա» , բանտ , հրցանազարկ անել՝ երկրի ներսում . կաշառք եւ կեղծիք՝ արտասահմանում , — ահա՛ բօլշեւիկների միջոցները՝ դաշնակների դէմ մղած պայքարի մէջ :

Ինչպէս յայտնի է , գրել կարելի է ամեն ինչ . բայց գրածը ապացուցել , «գրողների» համար շատ աւելի դժւար է . յաճախ նաեւ անկարելի :

Եթէ «Չեկա»ն իրապէս ճնշողական այն մեթոդներին դիմած լինէր , որոնց մասին այնքան շատ եւ աներկբայելի կերպով պոռում ու կանչում են դաշնակները Եւրոպայի ու Ամերիկայի բոլոր անկիւններում , այն ժամանակ գոյութիւն չէին ունենալ ո՛չ «Հայրենիք»ի , ո՛չ «Ասպարէզ»ի խմբագրութիւն-

ները, ո՛չ էլ դաշնակցական ուրիշ օրգաններ. չէին լինել նաեւ «պատասխանատու» եւ անպատասխանատու «կօմիտէներ», որովհետեւ դրանցում գործող համարեա բոլոր անձինք «Չեկայի Իշխանութեան տակ» էին ժամանակին: Բայց ինչպէս տեսնում էք, դրանք ոչ միայն հրացանազարկ չեն եղած, այլ եւ ողջ-առողջ արտասահման ընկնելով այնքա՛ն փաղաքշական տօնով պատմում են «արիւնարբու Չեկայի» մասին:

«Ասպարէզ»ը յիշատակում է մի «խօսակցութիւն» բանւորներից մէկի հետ՝ համալսարանի մասին. այդ յիշեցնում է մեզ մի ուրիշ խօսակցութիւն դաշնակցական բանւորի հետ՝ Չեկայի սարսափների մասին:

Կարդալով այդ սարսափների վերաբերմամբ դաշնակցական թերթերում, բանւորը ըստ երեւոյթին չի կարողացել խափանել իր կասկածներից մէկը, որ ինձ ուղղած հետեւեալ հարցումի մէջ էր ամփոփւած. «Որ Չեկան սարսափելի մի հիմնարկութիւն է, ես այդ մասին կասկած չունիմ, որովհետեւ հաւատում եմ իմ ընկերների վկայութիւններին. բայց ինչո՞ւ համար այդ արիւնարբու հիմնարկութիւնը, որ անմեղներին անգամ գնդակահարում էր, բոլոր դաշնակցական ղեկավարներին ազատ է արձակել, նրանց ընտանիքներին, եւ նրանցից շատերին թոյլ է տւել առանց արգելքի արտասահման անցնելու»:

Ես առաջարկեցի միամիտ դաշնակ-բանւորին այդ հարցումով դիմել «Հայրենիք»ի խմբագրութեան, ուր նոյնպէ՛ս «Չեկայի զոհերն» են նստած:

Ընդհանրապէս լաւ չպիտի՞ լինէր դաշնակների համար, լռել սարսափների եւ հրացանազարկութեան մասին: Չէ՞ որ ամենքի մօտ յիշողութիւնը այնքան կարճ չէ, եւ խիղճը այնքան բխցած, ինչպէս նրանց մօտ. չէ՞ որ դաշնակցական «մարդասէր ու դեմօկրատական» պահակի բոլոր խայտառակութիւնները կարող են լոյս աշխարհ դուրս գալ:

Չեկայի գործունէութեան հետեւանքը եղած է՝ դաշնակների գաղթը դէպի «դեմօկրատ» Եւրոսլան եւ Ամերիկան, ուր որ նրանք, թերեւս ոչ կատարեալ առողջ մտային վիճակով, սակայն առողջ մարմնով կարողանում են շարունակել իրենց «խիստ օգտակար» գործունէութիւնը:

Իսկ դաշնակների «դեմօկրատական» պահակը հետեւեալ խիստ «մարդասիրական» միջոցներին է դիմել. — Մէքֆից հրացանազարկ է արել Ալեքսանդրապօլում մայիսեան դէպքերից յետո՞ւ ձերբակալւած 10 հոգու, որոնց մէջ նաեւ խորհրդարանի անդամ Մելքոնին, որ բօլշեւիկ չէ եղած. առանց դատի, պատժական վաշտերի գլխաւորների հրամանով հրա-

ցանազարկ են եղել նաեւ հարիւրաւոր բանւորներ եւ գիւղացիներ՝ Ղարսի շրջանում, Նոր-Քայազդեում եւ ուրիշ տեղեր։ Բանտերը լցրել են ոչ միայն կօմունիստներով եւ կօմունիստական շարժման համակիրներով, այլ եւ բոլոր նրանցով, որոնք «բարեյոյս» չէին երեւում օխրանային։ Սրերով գաղանաբար կտոր-կտոր են արել բանտում սօցիալ-դեմոկրատ Պապօվեանին, Գեանջեցեանին եւ հազարաւոր անանուն բանւորների ու գիւղացիների, որ բօլշեւիկներ չէին. եւ որպէս վերջնական պսակում իրենց «լուսաւոր» քէթիմի, Տաթեւում, Ժայռերի կատարներից անդունդների մէջ են նետել հարիւրից աւելի կօմունիստ համակիրների եւ պատանդների, որոնց մէջ էին մտաւորականներ, բանւորներ եւ գիւղացիներ։

Դաշնակցական սլահակի այս-վերջին սոսկալի արարքի մասին շատ է գրւել նոյն իսկ դաշնակցականների կողմից. մինչեւ անգամ Վրացեանը փորձել է իր վրայից վերցնելու պատասխանատուութիւնը այդ սարսափելի ոճրագործութեան, բայց դաշնակցական օխրանայի գլխաւորը Թավրիզում հրատարակել է մի նամակ, որով նա ուղղակի մեղադրում է Վրացեանին եւ նրա ամբողջ կառավարութիւնը. եւ միանգամայն ապացուցել է նա այդ։ Վերջապէս երկրորդական խնդիր է թէ ո՞վ է անմիջական պատասխանատուն այդ միջնադարեան եղանակով գործադրւած տանջահարութեան եւ անմեղ մարդկանց անխորհուրդ սպանութիւններին, որովհետեւ իրական պատասխանատուն հանդիսանում է դաշնակցական կուսակցութիւնը։

Շարունակելով արդեօք «սխրագործութիւնների» նկարագրութիւնը... Չափից աւելի թուղթ պէտք պիտի լինէր դրահամար։

Ո՛չ, «Ասպարէզ»ի եւ «Հայրենիք»ի պարօններ, լաւ է, եթէ երբէք չչօչափէք Չեկայի «սարսափները», եթէ չէք կամենում որ աշխարհին ցուցադրէք ձեր արիւնոտ ձեռքերը եւ կեղծող բերանները...։

Չեկայից յետո՛ւ բանտը։

Այստեղ վիճելու պէտք չկա. մենք վճռականապէս յայտարարում ենք, որ ո՛չ միայն Սօվետական Հայաստանի բանտերում, այլ եւ Սօվետական միւս Հանրապետութիւնների բանտերում մէկ հատիկ դաշնակցական չի գտնւում, եւ այդ տեղեկութիւնը ամենից առաջ ստացւել է հենց իրենցից՝ արտաաւիւմանեան դաշնակցականներից, որոնց լաւ յայտնի էր այդ եւ որոնք մեզնից աւելի առաջ գիտէին այդ մասին։

Այդ տեղի է ունեցել, ո՛չ թէ այն պատճառով, որ Սօվետական Իշխանութիւնը շատ «սիրում է» դաշնակներին. այլ

միայն նրա համար, որ երկրի մէջ այլեւս գոյութիւն չունի «բազմարդէտութիւն»։ Իսկ նրանք, որոնք մնացել են, Դրօյի հետ կանգնած են «ճամբաների բաժանման» կէտի վրա եւ վաղուց կտրւել են արտասահմանի հակայեղափոխական կենդրոններից։

Նախկին դաշնակների համագումարները, որ Կովկասի մէջ այդ կուսակցութեան գերեզմանափորների դերն են կատարում, քայքայման պրօցէսն իր վախճանին են տանում, որ, սկսւել է Դաշնակցութեան կենդրոնական Կօմիտէից՝ Վրաստանում, Դաշնակցութեան կովկասեան կազմակերպութիւնների կողմից լիազօրւած Դրօյից եւ Եւրոպայում Չալխուշեանից ու Հայաստանի դաշնակ կառավարութեան առաջին նախագահ եւ կուսակցութեան առաջնորդ Քաջազնունու կողմից։ Բօլշեւիկների խնդիր չկա այստեղ. «Չուկը գլխից է հոտում»։

Այստեղ էլ երբէք պէտք չկա մեղքը Չեկայի վրա ձգելու։ Ո՛չ ոք վերել մատնանշւած անձնաւորութիւններից եւ հիմնարկութիւններից, որոնք կազմակերպական կերպով Դաշնակցութիւնը քայքայել են, (քանի որ բարոյապէս եւ գաղափարային տեսակէտից նա քայքայւած էր արդէն Յեղափոխութեան միջոցով եւ բանւոր դասկարգի յաղթանակով՝ բուրժուազիայի հանդէպ), Չեկայի գործակալ չէ հանդիսանում եւ «Հայրենիք»ի ու «Ասպարէզ»ի յօդւածագրերը իրենք չեն համարձակւում պնդել այդ։

Ի դէպ, այդ իրողութիւնը ընդունում է «Հայրենիք»ը ինքը, ջանալով «բացատրել» Դաշնակցութեան քայքայումը. բայց խնդիրը «Կօմիտարիանների» մէջ չէ, այլ փաստերի. իսկ փաստերը ո՛չ ոք չի կարող բացասել, նոյն իսկ դաշնակ խմբագիրները չեն կարող։

Ինչ կաշառելուն է վերաբերւում, որ իբր թէ բօլշեւիկները գործադրում են արտասահմանում, այդ մասին շատ խօսելու պէտքը չկա. բացորոշ է, որ դաշնակները ամեն ինչ չափում են իրենց սեփական արշիւնով. բայց չի կարելի ընդունել վերջապէս, որ արտասահմանի ամբողջ հայութիւնը բաղկացած է «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ի աշխատակիցներից եւ դաշնակցական ուրիշ գիշատիչներից։

Դառնանք վերջին «միջոցին», որով «նենգ» բօլշեւիկները դէպի իրենց են ուղղում գրաւել արտասահմանեան հայերի սրտերը եւ քայքայել Դաշնակցութիւնը։ Այս «քայքայումը» եւ «գրաւումը» երկու խմբագրութիւնների համերաշխ յայտարարութեամբ խեղաթիւրւած տեղեկատուութեան եւ գիտակցական կեղծիքի արդիւնք է։

Տեսնե՛նք։

Բ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ «ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ» ԵՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ

Նախ մի-քանի խօսք «Ասպարէզ»-ի եւ «Հայրենիք»-ի յօդ-
ւածագրերի «մեքօդների» մասին, որոնցով նրանք սկսում են
ցուցահանել իրենց «ճշմարտութիւնը» եւ բօլշեւիկեան «կեղ-
ծիքը» :

Այդ մեքօդը շատ հասարակ է. անդրադառնալով «քըն-
նադատութեան» ենթակա ընկեր Մարտունու կամ ուրիշ կօ-
մունիստի որեւէ մի մտքին կամ քէզին, դաշնակ խմբագրու-
թիւններից եկող «քննադատները» անելի յարմար են համա-
րում երբէք չգրադւել փաստերի վրա հիմնած այս կամ այն
ճշմարիտ յայտարարութեամբ, այլ ուղղակի մէջբերում են
անում եւ կրծքները ծեծելով սկսում եռանդազին բացական-
չել «Չէ՛ ու չէ՛» :

Թերեւս դա բաւականաչափ կտրական եւ «գեղարւեստա-
կան» ձեւ է, եւ սակայն պէտք է խոստովանել, որ այնքան էլ
համոզիչ չէ :

Ամբողջ աշխարհին յայտնի է, որ կօմունիստների բոլոր
ասածները եւ արածները դաշնականների համար միայն եւ մի-
այն «Չէ՛ ու չէ՛» է. բայց հենց այդ «Չէ՛»-ն է, որ պէտք է
առարկայական փաստերով ապացուցել, ինչ որ անկարելի է
դնել դաշնականների մամուլի մէջ :

Մենք թոյլ ենք տւած մեզ խուսափելու այդ հասարակ եւ
«գեղարւեստական» մեքօդից եւ պիտի գործենք միայն փաս-
տերով, որոնց հանդէպ այնքա՛ն քիչ համակրութիւն կա մեր
«քննադատների» կողմից : Փաստերը շատ լուրջ բաներ են,
նրանք երբէք չեն ոչնչանում բացականչութիւններով, որքան
էլ դրանք կտրուկ ու բարձրակոչ լինէին :

Դառնանք հիմա դաշնականների «ճշմարտութեան» եւ կօ-
մունիստների «կեղծիքին» :

Հայաստանը, խորհրդային պետական կազմ ընդունելուց
յետո համարեա թէ դարձել է ռուսական մի նահանգ — պըն-
դում են երկու խմբագիրներն էլ : Եւ որպէս ապացոյց մատ-
նանչում են նրանք Մարտունու ասածները : Բայց ի՞նչ է ա-
սում Մարտունին : Նա ասում է թէ երբ գալիս է Խորհրդա-
յին Իշխանութիւնը որը սովորեցնում է ժողովրդին լինել ինք-
նուրոյն, ունենալ որոշ դէմք, երբ «Յեղափոխութիւնը կա-
պում է նրան ռուսական բանւորութեան եւ հարեւան ժողո-
վրդների աշխատաւորութեան հետ, երբ կօմունիստական

Կուսակցութիւնը նրան մէկընդմիջտ հեռացնում է յափշտակիչներէն ու միջազգային աւազակներէն» եւ հենց դրանով էլ նա ստեղծում է ազատ, աշխատաւորական Հայաստանը, այն ժամանակ դաշնակները գալիս են եւ խուժանավարական կերպով սկսում են աղմուկ բարձրացնել ամենուրեք, իբր թէ այդ աղմուկը անկախութեան եւ ազատութեան կորստի համար է :

Մարտունու այդքան պարզ եւ աներկդիմի յայտարարութիւնից «Հայրենիք» ի «Իմաստուն» յօդաւածադիրը բարեհաճում է եզրակացնելու, որ Մարտունին ինքը խոստովանում է, թէ Հայաստանը «կախւած է» «Յեղափոխութիւնից եւ Կոմունիզմից» :

Այստեղ մենք գործ ունինք մի փոքր գրական անպատշաճութեան հետ, որը սովորաբար անւանում են «խարդախութիւն» : «Կապւած» բառը փոխւում է «կախւած»ի : Ի հարկէ, «ազատութեան» մասին ճառող դեմագոգները կարող են իրենց շատ ազատ զգալ այդպիսի խարդախութիւններ անելու : Բայց դատողութիւն ունեցող մարդը բաւականաչափ ինքնատիպ պիտի գտնի «սրամիտ քննադատի» այն ըմբռնողութիւնը, թէ երբ Ֆրանսիական եւ անգլիական բուրժուազիայի շահերը այդ երկու երկրները կապում են իրար հետ, այդ նոյնն է նշանակում թէ Ֆրանսիան եւ Անգլիան կորցրել են իրենց ինքնիշխանութիւնը, իրենց պետական անկախութիւնը եւ բնկերա-իրաւական տեսակէտից դարձել են «կախեալ» : Ի հարկէ անմտութիւն է այդ . սակայն «Հայրենիք» ի անպատասխանատու յօդաւածադիրն ի՞նչ կարող են խանգարել այդպիսի բաներ : Բաւական է, եթէ կարելի լինի ցեխոտել «չար բօլշեւիկներին» . իսկ դրա համար կարելի է դիմել ոչ միայն մի փոքրիկ խարդախութեան, — կարող է պատահել որ դա չնկատուի, — այլ եւ կարելի է ազատ համաձայնութիւնը, որ տեղի է ունեցել յանուն Խորհրդային Միութեան աշխատաւորների շահերին, փոխել եւ դարձնել «կախում», որը ենթադրում է օտար կամքի բռնի պարտադրում :

Ինչի՞ց է աւելի դժգոհ մեր բարկացայտ «քննադատը» : Կատարեալ կատաղութեան մէջ, հայհոյական փրփուրը բերնին, նա ընկ . Մարտունու այն խօսքերից թէ մեր երկիրը կապւած է Յեղափոխութեան եւ պրօլետարիատի հետ, հաւասարակշռութիւնը կորցնելով եւ իր յայտարարութեան հետեւանքի մասին երբէք չմտահոգելով բղաւում է . «Հայ ժողովրդի համար օտար ուժեր են» Յեղափոխութիւնը եւ Պրօլետարիատը : Ահա՛ հենց այդտեղ էլ թագնւած է բարկացկոտ յօդաւածի ամբողջ բանալին : Անշուշտ, մենք էլ երբէք կակած չենք ունեցել դրանում եւ շատ ուրախ ենք, որ «Հայրենիք»ը գալիս է ինքը հաստատելու «սեւով սպիտակի վրա»,

որ հայ բուրժուազիայի համար Յեղափոխութիւնը եւ Պրօլե-տարիատը» ոչ միայն «օտար ուժեր» են, այլ եւ թշնամի ու-ժեր: Միայն բաց է մնում այն հարցը թէ ի՞նչ գործ ունին այստեղ հայ աշխատաւոր ժողովուրդը, բանւորները եւ գիւ-ղացիները: Այստեղ էլ ամբողջ արդիւնքը հետեւանք է փոք-րիկ խարդախութեան հին, փորձած «մեքօդ»ի. «բուրժուա-զիա» բառը յօդաժագրի կողմից փոխարինում է «հայ ժո-ղովուրդ»ով եւ այնուհետեւ պատրաստ է բարկաճայթ «դե-մօկրատական» ճառը եւ վայելուչ «հայրենասիրական» կեց-ւածքը:

Հայ ժողովուրդը, որ բաղկացած է պրօլետարիատից եւ գիւղացիներից, իր ազգային ու դասակարգային անկախու-թիւնը ձեռք է բերել Յեղափոխութեան ճանապարհով եւ Յե-ղափոխական Դաշն կապելով դրացի ժողովուրդների բանու-րութեան եւ գիւղացիութեան հետ: Այդ իրողութիւնից յետո վեր կենալ եւ յայտարարել թէ «Յեղափոխութիւնը եւ Պրօ-լետարիատը» օտար ուժեր են այդ ժողովրդին, նշանակում է լինել չատ օտար այդ ժողովրդին: Այդպէս կարող են յայ-տարարել միայն «Հայրենիք»ի բարկացկոտ գրչականները, ո-րոնք այնքա՛ն սիրում են «ճշմարտութիւնը», բայց, որոնց աւա՛ղ... «ճշմարտութիւնը չի սիրում» երբէք:

Այժմ դառնանք փաստերին: Ինչպիսի՞ «անկախութիւն» գոյութիւն ունէր Հայաստանում, դաշնականների տիրապետու-թեան օրով: Ի՞նչ «անկախութիւն» էր այդ, որը այնքան գուրգուրանքով ողբւում է այսօր դաշնականների կողմից եւ որին վերջ տւին Բօլշեւիկները իրենց «կապով Յեղափոխու-թեան եւ Պրօլետարիատի հետ»:

Ալեքսանդրապօլի խորհրդակցական ժողովում, որ վրճ-ոական նշանակութիւն ունեցաւ, Հայաստանի անկախութեան հռչակումը, բոլոր քաղաքական կուսակցութիւնների եւ ա-ռանձնապէս Դաշնակցութեան կողմից անաչւեց որպէս ան-նպատակայարմար, իսկ անկախութեան ակտը՝ վնասակար: Մի օր վերջը միայն, Գերմանիայի եւ Տանկստանի ննշման տակ Անդրկովկասեան Սէյմի դաշնակ պատւիրականները եւ այդ կուսակցութեան ղեկավար մարմինները ստիպւած զգացին յայտարարելու անկախութիւնը: «Անկախ» Հայաստանի «կա-ռավարութիւնը» դեռ երկար ժամանակ այդ ակտից յետո նստած էր մնում Թիֆլիսում, չհամարձակւելով մեկնիլ դէպի «իր երկիրը» եւ դարձեալ վրաց կառավարութեան ննշման տակ էր, որ հայ «կառավարութիւնը» նստած վրացիների կողմից սիրալիրաբար նւիրւած սալօն-վագօնում շարժւեց դէպի «սիրեցեալ հայրենիքը»՝ չա՛տ ծանր հառաչանքներով:

«Անկախ, դաշնակցական» Հայաստանի գոյութեան ամ-

բողջ երեք տարւայ ընթացքում, երկիրը փաստօրէն կառավարւել է Թիֆլիսից՝ անգլօ-ֆրանսիական զօրքի հրամանատարութեան կողմից:

Ներքին քաղաքականութիւնը, վէճերը կուսակցութիւնների միջեւ, արտաքին յարաբերութիւնները, սահմանագծային հարցերը, եւ այլն, բոլորը կարգադրւում էին անգլիական եւ ֆրանսիական զօրավարների ու զնդապետների կողմից, որոնք իրենց յարմար տեսած եղանակով գրաւում էին այս կամ այն հողամասը, փոխում էին այդ տեղերի իշխանութիւնները, որոշում էին այդպիսի շրջաններում տիրող ընթիւմը եւ ներքին կարգ ու կանոնները: Լօռին, Ջանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջեւանը, Ղարսը փայլուն օրինակներ են տալիս դրա համար: Դեռ բոլորի յիշողութեան մէջ թարմ է այսպէս անւանւած հայ-վրացական պատերազմը, որ դար առաւ համաձայնական պետութիւնների զինուորական հրամանատարութեան հրահանգով. յայտնի է նաեւ այդ պետութիւնների «խաղաղութեան դաշնագիրը», որ գրւած ու պատրաստւած էր անգլիական մի մէյջօրքի կողմից եւ որը պարտաւորւած էին ստորագրելու երկու կողմերի «դիպլոմատները» «առանց որեւէ դիտողութեան», եթէ չենք սխալուում... երկու ժամայ ընթացքում:

Այդպիսի փաստեր չափից աւելի շատ գոյութիւն ունին, որպէսզի կարելի լինէր բոլորը թւել, եւ չափից աւելի էլ թարմ են դրանք այն մարդկանց յիշողութեան մէջ, որոնք սովորութիւն չունին դիմելու «գիտակցական մոռացութեան», որպէսզի պէտք լինէր յիշեցնելու:

Եթէ «անկախ» Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը գտնւել է անգլօ-ֆրանսիական հրամանատարութեան ձեռքում, ապա երկրի մատակարարութեան եւ սօցիալական օգնութեան գործը կենդրոնացած է եղել ամերիկացիների ձեռքում. թէ դրանք ինչքան յարգում եւ ակնածում էին «անկախ Հայաստանի կառավարութիւնից» դա երեւում է նրանից, որ ամերիկեան պաշտօնեաներից մէկը, մի մէյջօրք թէ զնդապետ, համարձակութիւն էր ստանում կառավարական մի բանկետի մէջ Դիլիջանում յայտարարելու ամբողջ «Մինիստրական Խորհրդի» երեսին թէ՛ իր գործունէութեան ամբողջ ընթացքում Հայաստանի մէջ «չէ հանդիպած ոչ մի ազնիւ հայի»: Յիշատակելու առանձին պէտքը չկա, որ ամերիկացու հանդիպած հայերը մշտապէս դաշնակ պաշտօնեաները եւ «մինիստրներն» են եղած:

Ասում են, որ այդ «փաղաքական» բնոյթագրից յետո՞ւ դաշնակ կառավարութեան գլխաւոր Ալեք. Խատիսեանը ներողութիւն է խնդրել այդ մէյջօրքից: Ինչի՞ համար. ինչո՞վ

էր զբաղւած այդ դէպքում «անկախ երկրի կառավարութիւն-
նը» : Ինչպէս ընթերցողը գիտէ , ոչնչով : Այդ կառավա-
րութիւնը միայն ազգային մի վերարկու էր , որով ծածկւում
էին իմպերիալիստների իդոները եւ գործերը :

Ինչպէ՞ս էր կարելի դարձել այդ :

Միայն այն պատճառով , որ հայկական բուրժուազիայի
շահերը , որոնց ներկայացուցիչն էր դաշնակ կուսակցութիւ-
նը , զուգադիպւել էին անգլո-ֆրանս-ամերիկեան կապիտա-
լիստների շահերին եւ հենց դրա համար էլ ստեղծւել էին
նրանց համագործակցութեան պայմանները , որոնց տակ պի-
տի շահագործման ենթարկւէին հայ աշխատաւոր զանգւած-
ները :

Երբէք փորձ արե՞լ է Դաշնակցութիւնը այդ կախւածու-
թիւնից ազատւելու եւ «իր երկիրը» որպէս «անկախ կառա-
վարութիւն» հաստատելու :

Ինչպէս յայտնի է , այդ կուսակցութեան ամբողջ «ար-
տաքին քաղաքականութեան» էութիւնն էր՝ գտնել «յանձնա-
կատար» մի պետութիւն . այսինքն կապիտալիստ մի կառա-
վարութիւն , որ համաձայնութիւն տար Հայաստանը «իր
զաղութը» դարձնելու : Հիմա , երբ մենք ունինք Պաղեստի-
նը , Արաբիան , Միջագետքը եւ ուրիշ երկրամասեր՝ իմպե-
րիալիստական «յանձնակատարութիւնների» տակ , շատ լաւ
գիտենք թէ ինչ է նշանակում տիրահռչակ «մանդատը» : Դա
ուրիշ բան չէ , քան իմպերիալիստ պետութիւնների գաղութ-
ային տիրապետութիւն : Եւ եթէ բուրժուական հեռատես
կառավարութիւններից ոչ մէկը չգտնւեց իր կապիտալով մի
այդպիսի «անստոյգ ձեռնարկի» մէջ քիսկ անելու , հարկաւ ,
վախենալով Տաճկաստանի հետ ընդհարւելուց եւ կամ Ռու-
սական Յեղափոխութեան մօտիկութիւնից , ապա այդ խընդ-
րում չի կարելի շատ մեղադրել դաշնակ «բանաստեղծական
դիւանագէտներին» կամ «դիւանագիտական բանաստեղծնե-
րին» : Նրանք մարդկային կարողութեան սահմաններում
գտնւած ամեն բան արին , որպէսզի «ազատ , անկախ Հայաս-
տանը» օտար կապիտալիստներին տան կապալով , — մի եր-
կիր , որ այնքա՞ն հեշտ կերպով , կայսեր եւ Սուլթանի բա-
րեհաճութեամբ տրւել էր նրանց :

Եթէ այդ բոլորը «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ի համար
«իրական անկախութիւն» է նշանակում , ապա ճիշտ է , որ
Խորհրդային Հայաստանը այդպիսի անկախութիւն չունի եւ
նա ամբողջ ուժով պիտի պայքարի նրանց բոլորի դէմ , որոնք
կհամարձակւին հայ դիւղացու եւ բանւորի ազատ ուսերի
վրա գաղութային լուծը դնելու փորձն անել , հոգ չէ թէ ինչ

գոյնզգոյն փալասներով զարդարւէին վտարւած բուրժուազիայի «գաղափարները» :

Խարդախութեան միջնորդութեամբ Խորհրդային Հայաստանի անկախութեան հետ գործը «վերջացնելուց» յետո «Հայրենիք»-ի յօդւածագիրը շատ վայելուչ եւ «դէպքին պատշաճ» կեցւածք առնելով, շարունակում է իր հակաճառութիւնը. «Կա՞ այսօր Խորհրդային Հայաստանի մէջ խօսքի եւ մամուլի գէթ նւազագոյն ազատութիւն» . ապա շարւում են դաշնակցական «ազատութեան» մնացած բոլոր բարիքները :

Այո, «խօսքի եւ մամուլի ազատութիւն», — բայց որո՞նց համար, — մենք հարցնում ենք վրդովւած յօդւածագրին :

Բուրժուազիայի եւ նրա պնակալէզների համար՝ Ո՛ջ, ինչքան որ նրանք վերջնականօրէն դեռ վար չեն դրած գէնֆերը :

Բանւորների, գիւղացիների եւ նրանց բոլորի համար, որոնք օգնում են Նոր Հայաստանը տեղծագործելու՝ ԱՅՈ՛ :

Եւ թող երբէք «Հայրենիք»-ի ու «Ասպարէզ»-ի «հեղինակները» տրտնջացող երես եւ «շնորհալի» կեցւածքներ չառնեն : Մենք անում ենք միանգամայն «հակառակը» այն բոլորի, ինչ որ արել են ձեւական դեմօկրատիզմի կեղծ քուրմերը :

Դաշնակցական տիրապետութեան ժամանակ «դեմօկրատական բոլոր ազատութիւնները» գոյութիւն ունէին միայն բուրժուազիայի համար : Բանւորները եւ գիւղացիները զրկւած էին այդ իրաւունքներից :

Դաշնակների Հայաստանում գոյութիւն ունեցե՞լ է թէկուզ մէկ հատիկ բանւորական կամ գիւղացիական թերթ, որ չգոցւէր կառավարութեան կողմից : Երեւանի եւ Ալեքսանդրապօլի բանտե՞րն էին «խօսքի ազատութեան», «դեմօկրատական» երաշխիքները . թէ՞ Տաթեւի ժայռերը, որոնց կատարներից անդունդների մէջ էին նետւում տարբեր մտածողութեան տէր մարդիկ . ա՞յդ էր, որ կոչւած էր ապահովելու «ազատ, անկախ» Հայաստանում «անձի անձեռնմխելիութիւնը եւ ապահովութիւնը» :

Համադասակարգային «դեմօկրատիա» գոյութիւն չունի . կա՛մ «ազատութիւն» բուրժուազիայի համար եւ մահ աշխատաւորներին, եւ կամ աշխատանքի դեմօկրատիա եւ վերջ բուրժուազիային :

Դաշնակները ընտրել էին այդ երկընտրանքներից առաջինը : Մենք գերադասում ենք երկրորդը . այսինքն՝ ազատութիւն բանւորներին եւ գիւղացիներին որ մեր ժողովրդի 90 տոկոսն են կազմում եւ «բռնութիւն» նրանց թշնամիներին :

Բայց եթէ դուք այդքան վստահ էք, որ աշխատաւոր

զանգւածների լայն շրջանները համակիր են Խորհրդային Իշխանութեան, ինչո՞ւ ժողովրդին իրաւունք չէք տալիս «ազատօրէն իր կարծիքը» յայտնելու. դայրացած դիմագծերով հարց են տալիս դաշնակ «իմաստունները» եւ վրաց սօցիալ-դեմօկրատներին խօսքերը թու՞թակելով, պահանջում են իրա-յատուկ մի «պլեբիսցիտ», համաժողովրդական քէտարկու-թիւն:

Այդ պահանջը շատ ծիծաղելի պիտի համարէինք եւ դրա-նով էլ բաւականանայինք, եթէ դա խուժանավարօրէն չափ-ւած չլինէր ամերիկահայ ընթերցողների անտեղեակութեան վրա:

«Իրապէս» կարող է մտածել ընթերցողը, «ինչո՞ւ Խոր-հրդային Իշխանութիւնը վախենում է քէտարկութիւն նշանա-կելուց»:


Սակայն այդ «գիւտի» ամբողջ «ֆօկլուր», որ դաշնակ-ները աւելի լաւ բան մտածելու ընդունակութիւն չունենա-լով, փոխ առել են վրացիներից եւ ձեռներն առած բոլոր չորս ուղղութիւններով «դռներն են ծեծում», ուրիշ բան չէ կըր-կին, քան մի խարդախութիւն. միայն այս անգամ բաւական խոչորկեկ մի խարդախութիւն:

Ամբողջ խնդիրը նրանումն է, որ այդպիսի ընտրութիւն-ներ ու աշխատաւորների կարծիքների ստուգումներ՝ փէտր-կութիւնների միջոցով, տեղի են ունեցած մէկից աւելի ան-գամներ: Դաշնակները շատ լաւ ծանօթ են այդ իրողու-թիւններին եւ գիտակցաբար ծածկում են դրանք:

Բացի այդ նրանք իրաւական ոեւէ հիմք էլ չունին պա-հանջելու այդ: Չէ՞ որ դաշնակների կառավարութիւնը ըն-դունելով, որ երկիրը կորցրել է վստահութիւնը դէպի ինքը, ընդարձակ զանգւածների անբաւականութեան ճնշման տակ, «կամովին» կերպով պարտաւորւած էր զգացել իշխանութիւ-նը յանձնելու կօմունիստներին: Այդպէս սիրում են խօսել իրենք դաշնակները:

Ուրեմն կուսակցութիւնը ինքը ընդունել էր որ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը իր դէմ է եւ կուզէ Խորհրդային Իշխանութիւն: Հակառակ դէպքում ոեւէ իմաստ չունէր իշ-խանութեան «կամովին» յանձնելը: Ինչո՞ւ այլեւս աղմուկ հանել. ինչո՞ւ էֆ այլեւս պահանջում ստուգելու այն, ինչ որ ինքներդ նանաչել էֆ որպէս անվիճելի եւ պարզ:

Ամբողջ երկրի մէջ Խորհրդային Իշխանութիւն հաստատ-ւելուց յետո տեղի են ունեցել աշխատաւորների ներկայա-ցուցչական հիմնարկների ընտրութիւնները, սկսած գիւղա-կան բջիջներից մինչեւ համահայկական համագումարը: Եւ այդ ընտրութիւնները, հակառակ Եւրոպային եւ Ամերիկա-



յին, ուր դրանք տեղի են ունենում 3-4 տարւա ընթացքում մէկ անգամ, ամեն տարի տեղի է ունենում Հայաստանում, գիւղական եւ շրջանային ինքնավարութիւնների ամենափոքրիկ օրգաններից սկսած մինչեւ համահայկական աշխատաւորական խորհրդարանը՝ Սովետների Համագումարը: Եւ ո՛չ մի անգամ, անցած երեք տարւա ընթացքում, ո՛չ մի ընտրութեան ժամանկ եւ ո՛չ մի տեղ դաշնակաները ոչ միայն քէներ չեն ստացել այլ եւ չեն կարողացել ամենափոքրիկ ազդեցութիւնն ունենալ Հայաստանի բանւորների եւ գիւղացիների վրա:

Այս իրողութիւնը թագցնելով Ամերիկայի ընթերցողներից, դաշնակ «հրապարակախօսները» հրապարակը աղմկում են «ընտրութիւնների» վերաբերմամբ: Եթէ ամեն դժգոհ գաղութային խմբակցութիւնների եւ խմբագրութիւնների պահանջները նկատի առնէին Հայաստանի Խորհրդային Իշխանութեան կողմից եւ սարքէին «պլեբիսցիտներ», այն ժամանակ կառավարութեան եւ ժողովրդին ուրիշ բան չէր մընալ անելու, քան տարին տասներկու ամիս կանգնած մնալ քէտուփների մօտ: Չէ՞ որ այդպիսի «դժգոհներ»ի, ուրեմն եւ պահանջների թիւր բաւական մեծ կարող է լինել: Եւ չէ՞ որ ժողովուրդը եւ Խորհրդային Հայ Կառավարութիւնը շատ աւելի կարեւոր գործեր ունին կատարելու, քան «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ի վրդոված յօդածագրերին «հանգստացնել»:

Բայց միեւնոյն է, դրանց անկարելի է ոեւէ բան ապացուցել եւ հասկացնել, եթէ եռամեա «պլեբիսցիտը» նրանց ոչինչ չի կարողացել սովորեցնել:

Գ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՐԻՇ «ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ» ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Դաշնակ «հրապարակախօսները» շարունակելով իրենց յարձակումները Խորհրդային Հայաստանի վրա, առանձնապէս զայրանում են ընկեր Մարտունու այն յայտարարութեամբ, որ Խորհրդային Հայաստանի Կառավարութիւնը ըզգալապէս, համարեա երկու անգամ ընդարձակել է հանրապետութեան սահմանները:

Եւ ի՞նչպէս չզայրանալ: Չէ՞ որ առանց յոգնելու այդ մարդիկ ամենուրեք եւ ամենքին, տեղի թէ անտեղի կերպով ազդարարել են որ Դաշնակցութիւնը միակ «հաւաքողն է հայ-

կական հողերի» . եւ յանկարծ գալիս է Մարտունին եւ մերկացնում նրանց կեղծիքը , ցոյց տալով , որ Խորհրդային Հայաստանի Կառավարութեանը յաջողւել է հանրապետութեան դոյութիւն ունեցող միջուկին միացնել հայկական այն հողամասերն ու բնակչութիւնը , որոնք դաշնակցականների կողմից այնքան աննպատակ կերպով բաժանւած էին մնում :

Ինչպէս յայտնի է բարկութիւնը խանգարում է բանականութիւնը : Եւ «Ասպարէզ»ի քաջ «հեղինակը» մոռանում է միանգամայն , որ եթէ Հայաստանի ներքին կեանքի պարագաները համեմատօրէն դիւրին է թաղցնելու ամերիկահայ րնթերցողներից եւ դիմել «խմբագրական բլրֆների» , ապա երկրի արտաքին կեանքի խնդիրները , նրա սահմանագծային հարցերը ճշդւած են միջազգային նշանակութիւն ունեցող ակտերով , — ակտեր , որոնք գրւած եւ հրատարակւած են . եւ բաւական կլինի միայն դրանց վկայութեան կանչել , որպէսզի կեղծիքը ինքնին մերկապարանոց կերպով հրապարակի վրա դրւի :

Ահա՛ ինչ է գրում այդ առիթով «Ասպարէզ»ը . ի՞նչ վիճակի մէջ էր հայկական տերիտօրիան , իշխանութիւնը մեծամասնականների ձեռքը անցնելուց առաջ :

Ըստ «Ասպարէզ»ի Ալեքսանդրապօլի դաշնագրով «Կարսը եւ Սուրմալուն յանձնւած էին Թուրքերին : Նախիջեւանի կողմից հայկական բանակը կանգնած էր Շահթախթում : Զանգեզուրը միացւած էր Հայաստանին : Ղարաբաղը վիճելի էր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ : Լօռին Սանահին կայարանից մինչեւ Սատախլու կայարանը եւ Ախլքալաքը վիճելի էին Հայաստանի եւ Վրաստանի միջեւ» :

Այս «իրողութիւնները» թւելուց յետո , «Ասպարէզ»ի քաջ յօդւածագիրը հարցնում է հպարտօրէն թէ՛ «ի՞նչ փոփոխութիւններ մտցրին այս սահմանների մէջ հայ բօլշեւիկները յօգուտ Հայաստանի» :

Դուրս է գալիս , որ բօլշեւիկների կողմից ոչ մի փոփոխութիւն չէ եղած «յօգուտ Հայաստանի» . նոյն իսկ դաշնակների կողմից «խնայւած» հողամասերից այս կամ այն կտորը «պարգեւ» է տրւել ուրիշներին :

Ամենից առաջ տեսնենք թէ ի՞նչն է այստեղ ճշմարիտ , մանաւանդ որ այս անգամ ճշմարտութիւնը երեւան հանելը շատ դիւրին է՝ պաշտօնական վաւերագրերի հիման վրա :

Ալեքսանդրապօլի դաշնագրութեան համեմատ , որ կընքւել է դաշնակների եւ Թուրքերի միջեւ , վերջիններիս յանձնւած էին ոչ միայն Ղարսի շրջանը եւ Սուրմալուի գաւառը , այլ եւ Նախիջեւանը . դրանից աւելի՛ն . թրքական զօրքերը վերցրել էին Ալեքսանդրապօլ քաղաքը եւ նրա ամբողջ շրջ-

ջանը՝ Երեւանի ուղղութեամբ, համարեա մինչեւ Անի կայարանը. իսկ հիւսիսից համարեա մինչեւ Ղարաքիլիսա (Ամամլը կայարանը) : Դաշնագրութեան հիման վրա դաշնակները թուրքերին պիտի յանձնէին բոլոր գէնքերը եւ գինւորական մթերքները, իրաւունք ունէին պահելու միայն 1,500 հոգուց բաղկացած միլիցիա, պիտի յանձնէին բոլոր երկաթուղիները՝ բոլոր ուղղութիւններով եւ ենթարկւէին Տափկաստանի գինւորական կոնտրօլին : Մինչեւ այդ պահանջների իրականացումը թուրքերը իրաւունք ունէին ոչ միայն պահելու ամբողջ գրաւած շրջանը, այլ եւ գրաւման շրջանը ընդարձակելու, ինչ որ նրանք անում էին արդէն անընդհատ, չարժւելով մի կողմից դէպի Լօռի եւ միւս կողմից էլ դէպի Ադստաֆա կայարանը : Պարզ խօսելով, Հայաստանի ամբողջ տերիտորիան կամ փաստօրէն եւ իրաւական կերպով թրքական զօրքերի ձեռքումն էր եւ կամ օր-աւուր սպասում էր այդ ֆակտագրին :

Հիմա՝ «վիճելի» շրջանների մասին :

Դրանք են՝ Ղարաբաղը, Լօռին եւ Ախլքալաքը. Ղարաբաղը երբէ՛ք, նոյն իսկ մէկ հատիկ ժամով չէ պատկանած դաշնականների Հայաստանին : Դաշնականները երբէ՛ք էլ չեն ձգտած Ղարաբաղն ունենալու. նրանք այդ պրետենզիային ոյժ են տալիս միայն նրա համար, որպէսզի յետագային կարողանային «փոխանակել» հայկական Ղարաբաղը թաթարական Նախիջեւանի հետ : Բանակցութիւնների ընթացքում այդ առաջարկը եղած է դաշնականների կողմից պաշտօնապէս : Յամենայն դէպս, դաշնակների ժամանակ Ղարաբաղը Ադրբէյջանի մասն էր կազմում եւ գրաւած էր նրա զօրքերով :

Ճիշտ միեւնոյն վիճակի մէջ էր նաեւ Ախլքալաքը, որ դաշնականները «փոխանակեցին» Լօռու հետ եւ որտեղ իշխանութիւնն ու զօրքը ամբողջ ժամանակամիջոցում վրացական էին :

Միակ շրջանը, որ իրապէս վիճելի էր եւ որի համար առաջացել էր հայ-վրացական պատերազմը, Լօռին էր : Բայց հենց այդ Լօռին էլ դաշնակները վրաստանի հետ կնքած պաշտօնական մի համաձայնագրով, Խորհրդային Իշխանութեան հաստատման նախօրեակին յանձնած էին վրաստանին, գերադասելով այդ շրջանը բաժանել Հայաստանից, քան տալ Խորհրդային Հայ Կառավարութեան : Իսկ փաստօրէն Լօռին ոչ միայն մինչեւ Սանահին այլ եւ մինչեւ Շահալի կամուրջը մշտապէս գրաւած է եղել վրացական զօրքերով :

Սրանք բոլորը յայտնի են ամենքին՝ պաշտօնական այնպիսի վաւերագրերի հիման վրա, որոնք ժամանակին հրա-

տարակւել եւ ստորագրւել են դաշնակաների կողմից: Ինչի՞ համար է ուրեմն այդ անիմաստ զայրոյթը եւ մեծախօսութիւնը:

Այսպէս. Դաշնակ կառավարութեան ձեռքում գտնւում էին միայն՝ Երեւանը, գաւառի մէկ մասով, Նոր-Բայազէդը եւ Դիլիջանը. առանձնակի մնում էր Երեւանի հետ որեւէ կերպ չկապւած, Զանգեզուրը. այն էլ թրքական կօնտրօլի տակ:

Ահա՛ եւ ամենը: Ահա՛ դաշնակաների Հայաստանը: Իրաւ է, այդ շատ քիչ նմանութիւն ունի Հայաստանի այն պատկերին հետ, որ դժած է «Ասպարէզ»ի ջանասէր աշխատակիցը: Բայց իրական, պատմական ճշմարտութիւնն էլ ճիշդ այդչափ նմանութիւն ունի «Ասպարէզ»ի «ճշմարտութեան» հետ:

Մենք դիտենք, որ «Ասպարէզ»ի յօդաձագիրը շատ «յանդուգն» մարդ է. բայց հազիւ թէ նա էլ համարձակւի պնդելու, որ փաստօրէն դաշնակ կառավարութիւնը աւելի հողամասերի տէր էր, քան մենք ցոյց տւինք վերեւ, որովհետեւ կրկնելով կեղծիքը, նա կզարնէր նոյն դաշնակ կառավարութեան պաշտօնական տեղեկութիւններին, որոնցով մեր ասածներն են հաստատուում միայն:

Այժմ տեսնենք թէ Հայ Բօլշեւիկները Հայաստանի օգտին ի՞նչ փոփոխութիւններ են մտցրել սահմանների մէջ. որով այնքան հետաքրքրւած է երեւում «Ասպարէզ»ի քաջ յօդաձագիրը:

Ամենից առաջ Հայ Բօլշեւիկները ոչնչացրել են Ալեքսանդրապօլի ամօթալի դաշնագիրը եւ հայրենիքին վերադարձրել Ալեքսանդրապօլը իր բոլոր գրաւած շրջանով: Յետո նրանք պարպել են տւել Նախիջեւանը թուրքերից եւ կազմել ինքնավար հորհրդային մի հանրապետութիւն՝ եղբայրաբար կապւած Հայաստանի հետ: Ղարաբաղը նոյնպէս ինքնավար հորհրդային հանրապետութիւն է անաչւել, ունենալով հայկական կառավարութիւն: Ամբողջ վիճելի Լօռին, մինչեւ Սատախլու կայարանը (եւ ոչ մինչեւ Սանահին, ինչպէս ստում է «Ասպարէզ»ը առանց կարմրելու), կցւել է Հայաստանին: Դա նշանակում է, որ Հայաստանը իր ազգագրական սահմաններում վերականգնւել է (Ղարսի եւ Սուրմալուի բացառութեամբ, որ դաշնակաները իրենք միջազգային արժէք ներկայացնող դաշնագրութեամբ յանձնած էին): Հայաստանը տերիտօրիալ կերպով երկու անգամից աւելի ընդլայնւել է:

Բացի դրանից, ոչնչացնելով թուրքերի հետ կնքւած դաշնագրութիւնը, Բօլշեւիկները Հայաստանը ազատել են

Թուրքերի կողմից յետագա գրաւումների վտանգից, զինուորական կօնտրօլից, զէնքերի, ռազմամթերքի յանձնումից, ինչպէս եւ սեփական բանակի ոչնչացումից :

Այսպէս են փաստերը : Եւ այդ փաստերը, ապացուցւած վաւերագրերով, յայտնի են կովկասում ամենքին, ամենափոքրից մինչեւ ամենամեծը :

Թող այդ յօդւածների հեղինակները իրենք յիշեն այն օրերը, երբ Խորհրդային Իշխանութիւնից փախուստի դիմելով «չտապում» էին արտասահման, եւ չէին կարողանում անցնել Ալեքսանդրապօլի միջով, որովհետեւ նա գրաււած էր թուրքերի կողմից. յանձնում էին վրացական պահակներին որպէս «գերի», Շահայի կամուրջի վրած որովհետեւ լօտին գրաււած էր վրացիներից, ու փախչում էին Նախիջեւանից դէպի Պարսկաստան, որովհետեւ ամբողջ Նախիջեւանը եւ Զանգեզուրի նամբանը բռնւած էր թաթարներով :

Յիշողութիւնը շատ կտրճանում է մարդկանց մօտ, երբ նրանք ապրում են ամերիկեան ապահովութեան մէջ : Կարժէր որ մի քիչ թարմացնէր այդ մարդկանց յիշողութիւնը : Տերիտորիայից յետո՛ւ լեզուն :

Դրանք ազգային պետութեան գլխաւոր յատկանիշներն են :

Մենք ցոյց տւինք, որ «անկախ» դաշնակցական Հայաստանը չունէր սեփական պետական տերիտորիա. ինչ որ կար, կամ վիճելի էր (նոյն իսկ դաշնակների խոստովանութեամբ) կամ թրքական իրական կօնտրօլի ու հովանաւորութեան տակ :

Ընկեր Այ. Մարտունին մատնանշելով դաշնակների արխիւը, ցոյց է տալիս, որ նրանց ժամանակ հանրապետութիւնը չի ունեցել նաեւ պետական ազգային լեզու :

Պէտք էր կարծել, որ այդ պնդումը պիտի հերքւէր փաստերով. բայց բարկաճայթ մեր քննադատները բաւականա՜նում են միայն կատաղելով եւ հայհոյանքներով : «Այ. Մարտունին ստախօս է» . «նա վաճառել է դաշնակների անարժէք պետական արխիւը, եւայլն, եւայլն» :

Ի դէպ. դաշնակներից բացի ոչ ոք մեղաւոր չէ այն բանում, որ նրանց պետական «ստեղծագործութիւնները», իրենց իսկ խօսքերը գործածելով, «հասարակ թրդթից» աւելի արժէք չեն ներկայացրել եւ պէտք են եկել միայն պարսկական խանութպաններին՝ ապրանք փաթաթելու համար : Այստեղ զայրանալու ոչինչ չկա. իսկ եթէ պէտք է զայրանալ, ապա . . . սեփական «մինիստրներին» վրա :

Բայց ինչո՞ւմն է էական խնդիրը : Ռուսական լեզուն հայերէնի փոխարէն գործածւե՞լ է թէ չի գործածւել որպէս

պետական լեզու՝ դաշնականների օրով: Ի՞նչ կպատասխանէք
սրան «Ասպարէզ»ի եւ «Հայրենիք»ի քաջ «քննադատներ»:
Պէտք է պատասխանել ուղղակի, առանց պտոյտներ անելու
եւ հայհոյելու: Կարող է պատահել որ հայհոյելը ձեզ հա-
մար դարձել է հոգեկան մի պահանջ եւ սովորութիւն, բայց
չնայած դրան, նա չի կարող ծառայել որպէս ապացոյց:

«Ինչպէս ամէնուն ալ յայտնի է», գրում է «Հայրենիք»ի
յօդաւածագիրը, «հայերէն լեզուն հանրապետական հիմնար-
կութիւններու մէջ մտաւ աստիճանաբար, որովհետեւ բաւա-
կանաչափ հայերէն գիտցող պաշտօնեաներ դեռ չկային. հա-
յացումը ուժգին թափով առաջ տարւեցաւ 1920 թ.»:

«Ասպարէզ»ի հեղինակը այդ խնդիրը լուսաբանում է դեռ
աւելի որոշ կերպով: Նրա ասելով մի քանի հիմնարկու-
թիւնների մէջ գործածւել է ուսական լեզուն, ինչպէս օրի-
նակ՝ «ռազմական նախարարութեան, ֆինանսների նախարա-
րութեան եւ փոստ-հեռագրական վարչութեան մէջ»: «Պատ-
ճառը շատ պարզ է»:

Ուրեմն հայերէն լեզուն, նոյն իսկ մեր «ֆինադատնե-
րի» վկայութեամբ չէ գործածւած մի շարք կարեւոր շրջան-
ներում, իսկ միւս շրջաններում էլ սկսել է գործածւել «աս-
տիճանաբար», «1920 թ. յունւարի 1-էն»:

Եւ այս խոստովանութիւնից յետո զոյգ յօդաւածագիրը
համարձակութիւն են ունենում Մարտունու յայտարարու-
թիւնը հայերէն լեզւի խնդրի վերաբարմամբ սուտ անւանե-
լու, «ինչպէս կարող է ստել միայն հայ Բօլշեւիկը»:

Որ «Հայ Բօլշեւիկը» ճշմարտութիւնն է ասել, այդ ըն-
դունել են իրենք եւս՝ յօդաւածների հեղինակները... Բայց ինչ-
պէ՞ս որակել նրանց կրկնակի կեղծիքները, որոնց մէջ նրանք
իսկ խոստովանում են... Այդ մենք թողնում ենք անելու
այնպիսի մարդկանց, որոնք աւելի մօտիկից ծանօթ են քրէ-
ական յանցանքները որակող դարձւածքների հետ:

Ամբողջական ճշմարտութեան համար պէտք է ասել, որ
մէկը միւսին գերազանցող «հեղինակները» ջանում են գտնել
եթէ ոչ բացատրութիւն, գէթ չքմեղանք այն հանդամանքի
համար, որ «իրենց ժամանակ» հայերէն լեզուն ընդունւած
չէ եղել պետական մաշտաբով. «որովհետեւ բաւականաչափ
հայերէն գիտցող պաշտօնեաներ դեռ չկային»: Անշուշտ,
յարգելի պատճառ է այս: Բայց զարմանալի չէ՞, որ «Մօս-
կւայի գործակալները» եւ «ուսական նւաճողները», — հայ
կօմունիստները, — կարողացել են գտնել անհրաժեշտ թը-
ւով պաշտօնեաներ, որոնք խօսում եւ հասկանում են հայե-
րէն եւ դարձրել են ազգային լեզուն պետական ընդհանուր

գործածութեան լեզու, մինչդեռ «անկախ Հայաստանի» «ազգային» կառավարութիւնը չէր կարողացել անել այդ:

Պէտք է ենթադրել, որ եթէ դաշնակ կառավարութիւնը իրապէս կամեցած լինէր, կարող էր գտնել այդքան պաշտօնեաներ: Բայց նրանցից ո՞վ կարող էր մտածել, որ Ամերիկայի մէջ օրին մէկը պէտք է խմբագրի հայերէն մի թերթ եւ պաշտպանի անկախութիւնը եւ ինքնիշխանութիւնը հայերէն լեզուի, երբ ինքը «ռուսական հողերի հաւաքողը», Ռուսական հակայեղափոխութեան պարագլուխը՝ Գեներալ Դենիկինը, դաշնակ Հայաստանի զօրքը ուրիշ կերպ չէր անւանում, քան իր «արեւելեան կօրպուսը», իսկ ռուս սպաներին Ադրբէջանի զօրաբանակի մէջ արգելում էր մասնակցել դաշնակների զինւորների հետ եղած կռիւներում:

Կարող է պատահել որ «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ի «սօցիալիստները» ցարական Ռուսաստանի վերականգնման հետ ունեցած իրենց բարեկամութիւնը եւս փորձեն եթէ ոչ արդարացնել, գէթ «բացատրել»: Բայց մեզ համար այդ «բարեկամութիւնը» ռուս ցարական աշխարհակալութեան ամենավատ ներկայացուցչի հետ շատ բան է բացատրում այն տեսակէտից, թէ ինչո՞ւ դաշնակների համար «անկարելի էր» գտնել «հայերէն լեզու գիտցող» պաշտօնեաներ:

Եւ վերջապէս ընկ. Մարտունու վերջին «կեղծիքը», որ չեն կարողացել տանել «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ի «ճշմարտասէր» աշխատակիցները, նրանումն է, որ Մարտունին պնդել է թէ դաշնակները Հայաստանը կործանել են նիւթապէս եւ կուլտուրապէս, իսկ Խորհրդային Կառավարութիւնը վերականգնել է եւ աւելի ու աւելի վերականգնում է Հայաստանի տնտեսական հիմքերը ու կուլտուրական առաջադեմութիւնը:

Այստեղ «քննադատների» կատաղութիւնը հասնում է իր գագաթնակէտին: Նրանք այնքան դուրս են գալիս իրենց հաւասարակշռութիւնից, որ բօլշեւիկների հանդէպ արած իրենց յարձակումների մէջ ցուցահանած համերաշխութիւնն անգամ կորցնում են:

Այսպէս՝ «Ասպարէզ»ի զւարթ հեղինակը չգտնելով ուրիշ բառեր Հայաստանի կուլտուրական եւ տնտեսական ծաղկման փաստը հերքելու համար, մոռանալով նոյն իսկ իր սիրած եղանակը՝ «ապացուցանել» եռանդուն կերպով «ո՛չ եւ ո՛չ» պոռալով, ազատութիւն է տալիս իր խաղասէր երեւակայութեան եւ «բնածին հումօրին»:

Նա ծածկելով մերկացրած խարդախութիւնների հետեւանքով առաջացած անախորժ դիմաչարժերը, սկսում է «սրաբանութիւններ անել»: Ի՞նչ նշանակութիւն ունի, մը-

տածում եւ հարցնում է զւարթախօս յօղւածագիրը, երբ բօլ-
շեւիկներն ժամանակ գիւղացիները փորում են ջրանցքներ,
որպէսզի իրենց դաշտերը ջրեն. չէ՞ որ նրանք ցարի ժամա-
նակ էլ «առու էին հանում»՝ իրենց «արտերը ջրելու հա-
մար»... — եւ այսպէս անւանւած «լաքէյական սրամտու-
թեան» ճաշակ մերկացնող մեր զւարթաբանը շարունակում
է այդ ուղղութեամբ «սրախօսել»:

Ի հարկէ «գիտական քննադատի» հետ, որ շփոթում է
դաշտեր ջրելու «առունները» ոռոգման ջրանցքային սխառ-
մի հետ, դժւար է վիճել: Այդպիսի դէպքում ուղղակի
պէտք է սպասել, մինչեւ որ անցնի «ուրախութեան տենդը» եւ
խենթերի ամենամօտիկ չէնքը մարդ ուղարկել բժշկի հե-
տեւից: Յուսանք, որ «Ասպարէզ»ի խմբագրութիւնը իր իսկ
շահը նկատի առնելով, չի յապաղիլ անել այդ:

Դրա հակառակ՝ «Հայրենիք»ի աւելի «աստիճանական»
հեղինակը չկարողանալով համաձայնել «Ասպարէզ»ի պաշ-
տօնակցի հետ, փոխանակ ծաղրելու այդ բոլոր ջրանցքները,
համալսարանները, ծխախոտի մշակութիւնը եւ այլն, լրջօ-
րէն սկսում է ապացուցանել, որ դրանք բոլորը իսկի էլ ծի-
ծաղելի չեն, այլ ընդհակառակը շատ կարեւոր են, բայց...
այդ բոլորը ստեղծւած է դաշնակցութեան ձեռքով, որի ան-
չնորհապարտ ժառանգորդներն են հանդիսանում հայ կոմու-
նիստները:

Ակնյայտ է, որ «սրախօսութեան» ապացոյցները շատ
էլ համոզիչ չեն եղած նոյն իսկ «Հայրենիք»ի համար: Այդ
պատճառով իսկ թողնենք «Ասպարէզ»ի հեղինակին «զւար-
թանայու» մինչեւ բժշկի հասնելը, եւ քայլենք պատւարժան
«Հայրենիք»ի «շաւղով»:

Այդպէս ուրեմն, այդ թերթի յայտարարութեան համե-
մատ, ամեն բան որ ստեղծւել է Խորհրդային Իշխանութեան
օրով, արդէն ստեղծւած է եղել Դաշնակցութեան կողմից:

Մեասնիկեանը հպարտանում է ոռոգման հսկայական
աշխատանքներով, բայց դրանց «ծրագիրները կազմւած էին
եւ նախապատրաստութիւնները տեսնւած էին դարձեալ Դաշ-
նակցութեան Իշխանութեան ատեն»:

Ենթադրենք նոյն իսկ, որ այդ կեղծիքը ճշմարտութիւն
է: Բայց չէ՞ որ տարբեր բան է՝ ծրագիրը թղթի վրա ունե-
նալ. եւ տարբեր՝ ջրանցքներ անցկացնելու եւ դրանց ամ-
բողջական սխառմի կառուցումը բնութեան մէջ:

Ասում են, որ գոյութիւն ունի ծրագրների մի շարք՝
Սահարայի անապատը ոռոգելու համար: Եթէ այդ գեր-
մարդկային աշխատանքը կատարւէր եւ այդ հսկա անապատը
ամբողջովին ոռոգւէր, ո՞ր յիմարն է, որ պիտի պնդէր թէ

որ մի նոր բան չի կատարուել, որովհետեւ ինչ որ ժամանակում ինչ որ մարդկանց կողմից ծրագիրներ են կազմուած եղել: Հենց խնդիրը նրանումն է, որ ծրագիրները իրականութեան վերաբերեալ: Եւ այդ է, որ չկարողացան անել դաշնակները, որոնց ծրագիրները «Իբրեւ հասարակ թուղթ» գործածելով «պարսիկ խանութայանները ապրանքներ կիսաթթէին»: Իսկ Խորհրդային Իշխանութիւնը՝ իրականացրաւ այդ:

Ծխախոտի եւ բամբակի մշակոյթը եւս դաշնակների ձեռքի գործ է, — հրճուում է «Հայրենիք»ը:

Բայց ահա թէ ինչ են ասում անկիրք եւ խաղաղ թւերը: 1921 թւին Հայաստանում մէկ հատիկ արշին հող չի եղել ծխախոտի եւ բամբակի մշակոյթի տակ. արդէն 22-23 թւին, Խորհրդային Իշխանութեան հերոսական ճիգերի հետեւանքով ծխախոտի արտադրութիւնը հասնում է տասնեակ հազարաւոր փութերի, եւ Երեւանը ունենում է իր սեփական ծխախոտի եւ ծխագլանիկի գործարանը: Իսկ բամբակի արտադրութիւնը 23 թւին հասած էր 220,000 փութի, եւ այս տարւան համար սպասւում է 800,000 փութ:

«Արարատ» գործարանը մեր ժամանակ էլ գործելիս է եղել, — հպարտանում է «Հայրենիք»ը: Ի հարկէ, երբ մի գործարան հաստատուած է լինում 25 տարի սրանից առաջ, նա յանկարծակի չի չքանում, չնայած դաշնակների «տնտեսութեան» . բայց գործարանային շէնքը տակաւին գործարան չի նշանակում. պէտք է տեսնել թէ նա ի՞նչ է արտադրում: Իսկ թւերը ասում են, որ դաշնակների օրով գործարանը չի արտադրել նոյն իսկ 10 տոկոսը նախապատերազմական արտադրութեան. իսկ այսօր միեւնոյն գործարանը արտադրում է համարեա թէ 100 տոկոս:

Կօօպերատիւների Միութիւնը եղած է մեր ժամանակ, — տրտնջում է «Հայրենիք»ը:

Մենք կասենք աւելին. նա եղել է դաշնակներից էլ առաջ: Բայց ի՞նչ էր ներկայացնում նա իրենից. մի փոքրիկ, սպառողական ընկերութիւն, հարիւրաւոր անդամներով եւ հազիւ 10,000 ըուրլու հասնող շրջանառութեամբ: Իսկ այսօր նա միացնում է տասնեակ հազարաւոր սպառողների, կապում է քաղաքը գիւղի հետ, կազմակերպում է գիւղատնտեսական եւ վարկային համագործակցութիւն եւ ունի 4-5 միլիոնի չափ ոսկի ըուրլու շրջանառութիւն:

Վերջապէս մենք համալսարան ենք բացել, — պատրաստ է լալու «Հայրենիք»ը:

Եթէ «Համալսարան» ասելով հասկացւում է Ալեքսանդրապոլի առեւտրական դպրոցի դահլիճը, ուր 20 թւին «Հա-

մալսարանի բացման» առիթով, դաշնակ կառավարութեան գլուխ Ա. լ. Խատիսեանը խոստանում էր այդտեղ ժողովւած կուսակցական անդամներին (որոնք, ըստ երեւոյթին ուսանողներն էին ներկայացնում!) երկու ամսից յետո «փոխադրել էրգրում», ապա ա՛յդ «Համալսարան»ի մասին երեք անգամ իրաւացի է «Հայրենիք»ը:

Բայց միայն... այդ «Համալսարանում» չկային ուսանողներ, պրոֆեսորներ եւ համալսարանական սլատկանելիութիւններ, չխօսելով տակաւին անհրաժեշտ կրթական հաստատութիւնների մասին, ինչպէս՝ կլինիկա, աշխատանոցներ, եւայլն: Գրադարանն անգամ չաւելութիւն էր այդ «Համալսարանում»: Համալսարան բառի այդքան «ընդարձակ հասկացողութեամբ» կարելի է որեւէ գիւղական դպրոց նոյն իսկ համալսարան անւանել: Ամեն խոշոր շէնք (օրինակ՝ առեւտրական դպրոցի շէնքը Ալեքսանդրապօլում) տակաւին բարձրագոյն կրթական հաստատութիւն չէ, որպէսզի կառավարութիւնը վերցնի եւ կոչի «ահա՛ համալսարանը»:

Ներկայիս Երեւանի (ո՛չ Ալեքսանդրապօլի!) համալսարանը գիտականօրէն պիտոյքաւորւած է. ունի փառաւոր գրադարան, օժանդակ գիտական հաստատութիւններ եւ ինստիտուտներ, չորս ֆակուլտետներ, հազարից աւելի ուսանողներ եւ մի քանի տասնեակ ուսուցչապետներ ու դասատուներ. հասկանալի է, որ այդ համալսարանը իր նախորդների շարքում չի հաշւում առեւտրական դպրոցի շէնքը, որը անշուշտ, Խատիսօվեան մոգական մի շարժման հետեւանքով չէր կարող փոխւել բարձրագոյն կրթական հաստատութեան եւ մինչեւ այսօր էլ մնում է որպէս մի համեստ, միջնակարգ առեւտրական դպրոց, ինչպէս որ եղել է միշտ:

Կարելի է դեռ շատ առաջ գնալ այդ «զուգահեռականներով». բայց մենք ծանրանում ենք միայն այն «օրինակների» վրա, որ բերւած են, «Հայրենիք»ի կողմից: Դրանք միանգամայն բաւական են, փաստերով զօրացնելու համար ընկեր Մարտունու հիմնական միտքը, թէ՛ Հայաստանի կուլտուրական եւ տնտեսական առաջադիմութիւնը սկսեց Խորհրդային Իշխանութեան հաստատման օրից, որ եկաւ ձերբագատելու աշխատաւոր ժողովրդի բոլոր ստեղծագործական կարողութիւնները:

Մենք այսպիսով ճշտեցինք թէ որքան ճշմարտութիւն կա դաշնակցական «ճշմարտութեան» մէջ: Ծիշտ այնչափ, որչափ ազնւութիւն կա «Ասպարէզ»ի եւ «Հայրենիք»ի աշխատակիցների մօտ:

«Սուտի ոտքերը կարճ են», — վկայութեան է կոչում «Ասպարէզ»ը ժողովրդական առածը:

Բայց չպիտի մոռանալ, որ դրա հակառակ «Կեղծիքի լե-
զուն շատ երկար է» :

Այդ ապացուցել են զայրացած «քննադատները» իրենց
յօդաձևերով, որոնց մէջ, ամենալաւ բաղձանքն ունենալով
հանդերձ անկարելի է գտնել ճշմարտութեան թէկուզ մէկ
հատիկ խօսք, եւ կամ մի բան, որ նման լինէր ճշմարտու-
թեան :

Դ

ԶԱՅՐԱՅԱԾ ԱՍՊԵՏԸ ԵՒ ԻՐ ԿԵՂԾԱԻՈՐ ՀՐԱՅԱՆԱԿԻՐԸ

Մինչեւ այստեղ մենք քայլ առ քայլ հետեւեցինք մեր
«քննադատներին», որովհետեւ դա միակ միջոցն էր՝ նրանց
«մեթօդները» ամբողջութեամբ մերկացնելու, ինչպէս եւ
ցուցահանելու համար այն խղճուկ միտքը, որ տարածւած է
երկու թերթերի՝ համարեա մի դիւժին էջերի վրա :

Սակայն մեր կողմից բաւականաչափ քաղաքավար չէր
լինիլ, եթէ մենք բաժանւելով մեր պատւարժան «քննադատ-
ներից» չյանձնարարէինք թէ՛ նրանց անձերը եւ թէ՛ նրանց
մի շարք «ինքնատիպ» մտքերը մեր ընթերցողներին. աւելի
եւս, որ «Ասպարէզ»ի յօդաձագիրը այնքա՛ն «սիրալիր» կեր-
պով յանձնարարում է ընկ. Մարտունուն, մինչդեռ մենք
մինչեւ այժմ զլացել ենք նոյն իսկ մեր զայրացած «քննա-
դատներին» անունները տալու :

Ճիշտ է, «Հայրենիք»ի «հրապարակագիրը» շատ զգու-
շաբար թազնւել է Ռ. Դ. նախագրերի տակ, հաւանօրէն հա-
մեստութիւնից, — չուզելով իր «փառապանծ» անունը յա-
ջորդներին թողնել : Յամենայն դէպս, նա, ով թազնւել է
Ռ. Դ. «գաղտագրերի» հետեւը, ազատել է իրեն անհրաժեշ-
տութիւնից՝ իր ճակտի վրա ամբողջ կեանքի տեւողութեամբ
«ստախօս» տիտղոսը կրելու : Այս «մեթօդ»ը, որ հազիւ թէ
բաւականաչափ պարկեշտ է, զուրկ չէ ճարակութիւնից եւ
միանգամայն «պատիւ» է՝ բերում նրա հնարողին :

Բայց միեւնոյն չէ՞, թէ ո՛վ է թազնւած այդ տառերի
տակ, — Դարբինեանը, Ահարոնեանը, Նաւասարդեանը թէ
ուրիշ մի արարած. դաշնակցական «հրապարակախօսները»
եւ նրանց «գրւածքները» բոլորն էլ՝ միեւնոյն նմոյշի՝ համե-
մատ են կերտւած, ունին իրենց կուսակցական «Տրէյդ
Մարկը», — «made in Dashnakzutiun». եւ այդ ապրանք-
ները հանրածանօթ իրենց ցածր որակով, մշտապէս փտումի
միեւնոյն հոտովը զանազանւում են ուրիշներից :

«Հայրենիք»ի հակառակ, «Ասպարէզ»ի քաջ հեղինակը յարմար է տեսել իր անունը ամբողջութեամբ ստորագրելու՝ Վարդգէս Ահարոնեան, որ անշուշտ, աւելի է համապատասխանում իր «դիրքին» եւ «աստիճանին» (այդ մասին քիչ յետոյ) :

Ո՞վ է Պրն. Վարդգէս Ահարոնեանը :

Դա՛ Աւետիս Ահարոնեանի որդին է : Այս վերջինին յանձնարարելու պէտք չկա, որոհետեւ նա ինքն իրեն նոյն իսկ պէտքից աւելի յանձնարարած է մինչեւ հիմա :

Դժբախտաբար «Ասպարէզ»ի յօդաձագրի մասին աւելի բան չէ յայտնի, քան միայն այն, որ նա իր հօր որդին է :

Իրաւ է, դա քիչ է յանձնարարութեան համար : Բայց դա միանգամայն բաւարար է գտնելու համար այն «վերամբարձ ոճի» բանալին, որ յատկանշում է «բարձր դասի» «հեղինակներին» գրութիւնները :

Սակայն, ի՞նչն է, որ երիտաարդ «ասպետին» այնքան բարկացրել է, որ նոյն իսկ պէտք է եղել «Ասպարէզ»ի վեց համարները լցնելու բարկացած մտքերի շարայարութիւններով, ըրագրական նիւթերը զոհելով :

Բանից դուրս է գալիս, որ մեր «ասպետը» ենթադրում է թէ ամերիկահայ գաղութին դիմում անելը «ժառանգութիւնից» մնացած իր միակ իրաւունքն է, եւ ով «ապօրինի» կերպով անում է այդ, ապա այդպիսի մի դիմումի հետեւում չեն կարող թաղնւած չլինել ինչ որ «նենգամիտ», ձրգտումներ, — մանաւանդ նրա նախաիրաւունքի դէմ ոտնձգութիւններ :

«Ո՞վ է Ալ. Մարտունին» . «այդ ո՞ր ժամանակից ի վեր Ոորհրդային Հայաստանի վարիչները սկսել են իրենց «աչքերը յառել» դէպի արտասահմանեան եւ մասնաւորապէս Ամերիկայի հայութիւնը» . անծածկելի զայրոյթով բացականչում է «հեղինակը» :

Հայ գաղութներին դիմելու իրաւունքը, ըստ երեւոյթին, Պրն. Ահարոնեանը համարում է իր «սեփական ժառանգական նախաիրաւունքը» եւ չափից թաւելի բարկանում է, երբ ինչ որ «պարվենիւ», Հայ Հանրապետութեան Որհրդային Կառավարութեան նախկին նախագահը եւ ներկայիս Անդրկովկասեան Որհրդային Ֆեդերացիայի նախագահի պաշտօնակիցը համարձակւում է նրա այդ «անկապտելի իրաւունքի» դէմ ոտնձգել : Հաւանօրէն ընկեր Մարտունին նախ իրաւունք պիտի խնդրէր բարկացկոտ «ասպետից», որ պէսզի կարողանար խօսել Ամերիկայի աշխատաւոր հայ գաղութի հետ !

Իր «չատ հասկանալի» զայրոյթի մէջ բարի «ասպետը» չի

կարողանում նկատել, — եւ կամ նկատում է ու չի ուզում մատնել որ նկատում է, — թէ ինչ «տարօրինակ» միջոցների է դիմում իր շատ գովելի բաղձանքի մէջ՝ յետ մղելու համար Մարտունու «յարձակումը»՝ «նորին բարձրութեան» պատկանող ամերիկահայ գաղութի վրա :

Այսպէս, նա կառչելով տպագրական մի վրիպակի, որի հետեւանքով Երեւանի համալսարանի ուսանողների թիւը 1000-ի փոխարէն 100 է դարձել, ուրախանում եւ ուստոստում է որպէս մի փոքրիկ վայրենի, որին գրամօֆոնն են ցոյց տալիս եւ «Ասպարէզ»ի երկու համարների ընդարձակութեամբ, տպագրական անգղուշութեան պատճառով դուրս մնացած ԶԵՐՕՅԻ շուրջը իդիօտին յատուկ պարն է սկսում՝ ոտները գետին զարնելով շարունակաբար :

Ի դէպ. ի՞նչ համալսարանում է սովորել գերամեծար «հեղինակը», եթէ երբէք որեւէ տեղ սովորել է : Նրա զամանակի դիւտը թէ՛ մինչեւ անգամ Մօսկւայի համալսարանում չի եղած 80 պրօֆեսօր, ենթադրել է տալիս, որ «վերամբարձ ոճով» «բարձր դասի» մեր պարոնը աւելի շատ համալսարանի բակում արեւածաղկի հատիկներ է «չրթել», քան ներս մտել լսարանները : Որպէսզի ապագային այդօրինակ «յայտնագործութիւններ» տեղի չունենան, մենք խորհուրդ ենք տալիս թերթատելու Մօսկւայի Համալսարանի համապատասխան հրատարակութիւնները, որոնց մէջ կարելի պիտի լինէր գտնել ոչ միայն անուններ, եւ ազգանունները մի քանի հարիւր պրօֆեսօրների ու պրիվատ դօցենտների, այլ եւ նրանց հասցէները. եւ այդ՝ նոյն իսկ այն տարիներում, երբ մեր խանդավառած «հեղինակը» թափառում էր ոռոսական այս կամ այն համալսարանի պատերի շուրջ :

Նայե՛նք մի ուրիշ «փոքրիկ» խարդախութեան. ընկ. Մարտունին գրում է. «Դաշնակցութիւնը Հայաստանում թոյլ է» . բայց մեր անխոնջ ասպետը այդ առիթով մի քիչ զաւգակելուց յետո գրում է, որ Մարտունու յայտարարութիւնը կարելի է կարդալ՝ «Դաշնակցութիւնը Հայաստանում ուժեղ է» :

Ենթադրում ենք, որ ընկ. Մարտունու խօսքերը պիտի կարդացէին այնպէս, ինչպէս գրւել են նրա կողմից, նոյն իսկ եթէ դրանք շատ անհաճելի լինէին նրա համար, ով «ըստիպւած» է կարդալու դրանք. բայց այդպէս չէ անում յայտնի «մեթօդի» սիրահար «գրչի» մեր ասպետը. նա իր ցանկութեան համեմատ կռահումներ է անում եւ ուրիշի բերնի մէջ է դնում այնպիսի խօսքեր, որոնք տրամագծօրէն հակառակ են նրա մտքերին :

Ինչ կուզէք ասացէք, այս եղանակը շատ էլ ասպետական չէ, թէեւ «ասպետի» կողմից գործադրւած :

Քննադատութեան այսպիսի եղանակներով անկարելի է շատ հեռուն հասնիլ. շատ-շատ դրանցով կարելի է մօտենալ միայն... քրէական յանցագործների բանտին:

Արժանավայել է այդ «բարձր դիրքին» եւ «աստիճանին»:

Մէկ կէտում մենք միանգամայն համաձայն ենք «առածների եւ վկայութիւնների» հեղինակի հետ. այն է՝ «մարդը կարող է փոխել իր շապիկը, բայց չի կարող փոփոխութեան ենթարկել առաքինութիւնների եւ սրբապետութիւնների այն դոմարը, որ կոչւում է մարդկային հոգի: Ո՛ւր կուզես գնա, քանի՜ շապիկ կուզես փոխիր, հոգւոյցդ չես ազատւի»:

Դա շատ ճիշտ է: Եւ այդ «զարմանալի» ասացածքի ամենալաւ ասացոյցն ինքը Ահարոնեանն է. մինչեւ անգամ Ամերիկան եւ «ասպետի» «ոսկէ շապիկը» չի կարողացել փոխել գիւղական պրօպականդիստի դաշնակցական «հոգին», որ իր ամբողջ գիտական իմաստութիւնները քաղում է հինգ-կօպէկնոց բրօշուրներից, իսկ սրբապականդայի մեթօդները՝ կեղծիքից, խարդախութիւնից, աղաւաղումներից եւ նման քրէական «առաքինութիւններից»:

Ճշմարտութեան սիրոյն պէտք է նկատել, որ ընդհանրապէս Պրն. Ահարոնեանին շատ աւելի յաջողւում են վերեւ նշածի պէս «բարոյախօսական ասացածքները», քան իրողութիւնների ճշգրիտ նկարագրութիւնները: Իրապէս ինչո՞ւ չերթալ եւ չդբաղւել ժողովրդական ասացածքների հաւաքումով. տեսէ՛ք, գահընկէց եղած տաճկական Սուլթան-Սալիֆայի որդին սկսել է փոստային դրօշմների ժողովածուներ հաւաքելով զբաղւել. ինչո՞ւ մեր առակաբանը եւս չզբաղւի այդպիսի մի գործով... Յամենայն դէպս դա շատ աւելի լաւ զբաղմունք կլինէր, քան խարդախելը, աղճատելը եւ անճարակութիւնից տպագրական վրիպակների չարաշահումը:

Իր յօդւածի վերջում Պրն. Ահարոնեանը մի շատ արժէքաւոր խորհուրդ է տալիս. «ինչպէ՞ս սպաննել Դաշնակցութիւնը», հարցնում է նա: Դրա համար շատ բան պէտք է: «Պարզ միջոցը, որով Բօլշեւիկները կարող են սպանել Հ. Յ. Դաշնակցութիւնը» այն է, որ «հայ Բօլշեւիկները հրապարակ բերեն եթէ ոչ աւելի, զէթ նոյնչափ շիտակութիւն ու ազնւութիւն, որչափ Դաշնակցութիւնը. նոյնչափ հայրենասիրութիւն, որչափ Դաշնակցութիւնը, եւ նոյնչափ ինքնագոհութիւն, որչափ Դաշնակցութիւնը: Այն օրը, որ օրը հայ Բօլշեւիկները կցուցադրեն այս յատկութիւնները, այդ օրը կմեռնի եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը»:

Եթէ իրապէս սա «մահանալու միակ պայմանն» է, ապա

մենք կարող ենք ուրախացնել մեր ասպետին յայտնելով, որ Դաշնակցութիւնը յաւիտենապէս պիտի ապրի: Որովհետեւ վերոյիշեալ առաքինութիւնների մէջ Դաշնակցութեան մակարդակին հասնելը այնքան էլ հեշտ բան չէ: Սաբել սեփական ժողովուրդին ամբողջ երեսուն տարի, («շիտակութիւն»!), փախչել նրանից, երբ նա ի՛ր իսկ վարած քաղաքականութեան հետեւանքով անտանելի վիճակի մէջ է գտնւում («ազնւութիւն»!), յետո նստելով հեռաւոր, ապահով անկիւններում, ամեն կերպ խանգարել ժողովրդի մնացորդների պահպանման եւ վերականգնման գործը, կասալով յանձնել նրան Անտանտի դաշնութային՝ զիջատիչներին, տաճկական փաշաների ու վրացական ազգայնականների միջեւ կուսխնձոր դարձնել նրան («հայրենասիրութիւն»!), եւ վերջապէս սեփական կաշին փրկելով («ինքնազոհութիւն»!) կընքել Ալեքսանդրապոլի դաշնագրութիւնը, որը զինաթափութիւնից եւ դաշնակ ղեկավարների փախուստից յետո՝ դէպի անվտանգ վայրեր, պիտի պսակւէր հայ ժողովրդի կատարեալ ոչնչացումով, — չէ, մինչեւ այդ մակարդակը չեն կարող ցածանալ Հայ Բօլշեւիկները. հազա՛ր անգամ իրաւացի է Պրն. Ահարոնեանը:

Բայց թող նա հանգիստ լինի. նրա «գիտական» խորհուրդները ոչ ոքին պէտք չեն: Դաշնակցութիւնը առանց այդ էլ քայքայւում է. դրա ցցուն ախտանիշներից մէկն է այն դարչահոտութիւնը, որ բուրում է «Ասպարէզ»ի անճրկած ասպետի բարկաճայթ յօդւածից:

Բաժանւելով «վայելուչ դասի եւ ոճի» մեր զւարթաբան «քննադատից», մենք մեր կողմից պարտականութիւն ենք զգում նրան մի քանի՝ խորհուրդներ տալու, եթէ նա այսուհետեւ էլ դեռ պիտի շարունակի հրապարակախօսութեամբ զբաղւել:

1.— Երբէք խարդախութեամբ չզբաղւել, որովհետեւ վաղ կամ ուշ կբացւի նա:

2.— Երբէք չստել, որովհետեւ միեւնոյնն է, կմերկանա նա: Եւ՝

3.— Բարեմիտ ամերիկահայերին չվախցնել Չեկայով, որովհետեւ նրանք կարող են համեմատութիւն անել «Չեկայի զոհեր», լաւ կերած-կերակրւած Ահարոնեանների, Դարբինեանների եւ ուրիշների ու Տաթեւի ժայռերի ստորոտներում անշնչացած հարիւրաւոր դիակների միջեւ. եւ այդ համեմատութիւնը հազիւ թէ զայրացած ասպետի եւ նրան հետեւող պահակների օգտին լինի:

Եթէ զայրացած ասպետը մոռացութեան տալով ամեն տրամաբանութիւն, որ առողջ բանականութեան եւ տարրա-

կան բարոյականութեան հիմքն է, իր «գրութիւնները» շարայարում է միանգամայն «բարի ասպետի» պէս բարձրաթուիչ մի ոճով», ապա «Հայրենիք»ի նրա երեսպաշտ զինակիրը թագնւելով Ռ. Դ. ծածկագրերի տակ, դիմում է ուրիշ տեսակի մի ոճի:

Ասացածքները, որպէս քննադատութեան «մեթոդներ» նա չի գործածում (այդչափն էլ արդէն մեծ բան է!), եւ չը նայած որ գրաւոր խարդախութիւններ ու աղճատումներ անում է (ըստ երեւոյթին այդ բոյնի մէջ ա'յդ սովորութիւնն է ընդունւած), սակայն ջանում է, ինչ էլ որ չլինի, իր «դիտողութիւնները» «հիմնաւորել»:

Ըստ երեւոյթին ոճի եւ «ճաշակի» այս տարբերութիւնը պէտք է բացատրել «սօցիալական» վիճակի տարբերութեամբ. չէ՞ որ մեր խեղճ ասպետը այնքա՛ն շատ բան է կորցրել. ի՞նչպէս նա խորամանկութեան դիմի եւ կեղծաւորութիւն անի, — նա այնքա՛ն ջարդւած եւ վիրաւորւած է...

Միանգամայն տարբեր է հրացանակիրը. նա զգուշաբար իր չորս կողմն է նայում եւ վախենալով թէ իր տէրը կտեսնի իրեն, իր վրա է առնում «դեմօկրատական» բաճկոնը, ուսերին է ձգում «սօցիալիստական» վերարկուն, կանգնում է արժանավայել հագուստի եւ կեցւածքի մէջ եւ սկսում ճարտասանել. — խնդրե՛մ, բօլշեւիկները «պուրժուական իմփերիալիստներուն ոտները կլիզեն», «անոնք հայ ժողովուրդին» գլուխ են՝ կանգնել «բացառապէս ռուսական սւիններու եւ ոստիկանութեան» օգնութեամբ, ժողովրդի շահերը թողնելով «անոնք կմտածեն միայն սեփական կուսակցութեան» շահերի մասին:

Եւ այս բոլորից յետո ի՞նչպէս կարող է անանուն «հեղինակի» «սօցիալիստական խիղճը եւ դեմօկրատական հոգին» լռել ու չբռնկւել:

«Ոտներու լիզման» խնդիրը, դաշնակ «հրապարակախօսը», նոյն իսկ եթէ նա անանուն է, լաւ կանի որ երբէք չյիշատակի. որովհետեւ, ինչպէս ասում են, Լօյդ Զօրջի, Կլեմանսօի, Պուանկարէի եւ աշխարհի ուրիշ զօրաւորների ու նոյն իսկ շատ անգործների դարչապարների վրա կոշտեր են առաջացել՝ Ահարոնեանների, Դարբինեանների, Սատիսօյների եւ դաշնակ մնացած «դիաւանագէտների» ու «պետական մարդկանց» կոշտ լեզուներից:

Երբ 21 թւի Փետրվարին, դաշնակները թեւաւորւած՝ վրացի ազգայնականների «յաջողութիւններով» եւ խաբւած՝ տաճկական երկրորդական գործակալներից, Սորհրդային Հայ Իշխանութեան դէմ արկածախնդրային ապստամբու-

Թիւնը սարքեցին, հայ գիւղացիութիւնը համարեա առանց
զէնքի, միայն դադանակներով եւ գերանդիներով քշեց նրանց
... մինչեւ Երասխը՝ պարսկական խաների մօտ: Փորձը
փառաւորապէս ցոյց տւաւ, որ Բօլշեւիկները կարող են «եօ-
լա գնալ» նաեւ առանց «ռուսական սւինների»: Յայտնի ե-
ղաւ, որ Բանւորա-Գիւղացիական Հայաստանի թշնամիների
հաշիւները մաքրելու համար միանգամայն բաւական են նա-
եւ հայ գիւղացիների կոշտացած բռունցքները, որոնց վրա
եղած կոշտերը, յամենայն դէպս լիզելուց չէին առաջացել,
այլ աշխատանքից:

Այդպէս պատահեց, որովհետեւ Բօլշեւիկները «բախտ»
չէին ունեցել «անկախութիւն» ստանալու տաճիկ սուլթան-
ների ձեռքերից եւ երկիրը «կառավարելու» ֆրանս-անգլիա-
կան զօրքերի եւ ամերիկեան նպաստատուոյցների միջոցով:

Թէ դաշնականների մօտ «ինքնագոհութիւն» բառը ինչ ի-
մաստ ունի, եւ թէ նրանք ինչպէս են «տրտմում» ժողովրդի
դժբախտութիւնը տեսնելով, դա կարելի է որոշապէս նկա-
տել այն իրողութիւնից, որ նրանք փախչելով Պարսկաստան,
իրենց հետ վերցրին Հայ Հանրապետութեան պատկանող ամ-
բողջ դրամը եւ արժէքները, դրանք դարձրին սեփական կու-
սակցութեան եկամուտ եւ հանգիստ խղճով սկսեցին այդ
դրամներով հրատարակել կուսակցական թերթեր. եւ այդ
մի այնպիսի ժամանակ, երբ նրանց կողմից կողոպտւած հայ
ժողովուրդը նրանց կողմից քայքայւած երկրի մէջ ոչինչ
չունէր իր ֆիզիքական գոյութիւնը պահելու համար հաց դը-
նելու:

Դաշնակները չէին, այլ Մօսկւայի «տիրան-բօլշեւիկնե-
րը», որ հայ ժողովրդին տւին երկու միլիօնի չափ ոսկի բուր-
ւի, հարիւր հազարաւոր փութեր հաց, տեխնիկական եւ վե-
րաշինական նիւթեր ու գործիքներ, եւայլն, եւայլն:

Ինչքա՞ն նման են այս բոլորը այն բանին, թէ՛ դաշնակ-
ները գիշեր-ցերեկ մտածել են միայն «ժողովրդի» մասին,
իսկ բօլշեւիկները «սեփական կուսակցութեան»:

Բօլշեւիկները առհասարակ սոսկալի մարդիկ են: «Հայ-
րենիք»ի անանուներ դեռ չգիտէ այն բոլոր սոսկումները,
որ տեղի են ունենում նրանց ձեռքով. թէ՛ չէ նա կընդարձա-
կէր տակաւին «բօլշեւիկեան մեղքերի» ցուցակը եւ դրա հա-
մեմատ էլ իր տրտունջները ու յուզումը կզօրացնէր:

Բայց ահա դաշնակ մի ուրիշ «գրող», Նաւասարդեանը՝
կայիրէից (ի հարկէ ոչ Հայաստանից!), չափազանց բարկա-
ցած այն հանգամանքից, որ հանգուցեալ դաշնակ կառավա-
րութեան նախկին նախագահ Քաջազնունին բացասում է սօ-
վետա-տաճկական դաշնագրութեան գոյութիւնը, որը, իբր

Թէ Հայաստանի դէմ է ուղղւած, կարեւոր յայտնագործութիւն է անում հայ ժողովրդի առջեւ, բօլշեւիկեան այդ նոր «մեղքը» հրապարակելով:

Քաջագնունին, դաշնակ կառավարութեան գլուխը, յայտարարում է թէ մանրամասն հետազօտութիւնից յետո համոզւել է, որ այդպիսի դաշնագրութիւն եւ դաշնակցութիւն երբէք չի եղել եւ որ այդ ամբողջ պատմութիւնը «դաշնակցական առասպել է» արտասահմանեան գործածութեան համար:

«Ինչպէ՞ս չի եղել», զայրանում է Նաւասարդեանը եւ բերում «անհերքելի ապացոյցներ» . երբ նա եւ նրա ընկերները Կարլ Կառլտսկու մօտ են եղել Թիֆլիսում, ուր այսպիսի մի դաշնագրութեան գոյութեան հնարաւորութեան մասին կասկածներ են յայտնւել, Կարլ Կառլտսկին «իր կնոջ հետ միասին» զարմացած պատասխանել է թէ ինչպէս կարելի է կասկածել քանի որ իրենց աչքի առջեւ Տրապիզօնում ուսական նաւից ազատ եւ բաց կերպով թրքական զօրքերի համար ռազմամթերք է հանւել:

Ահա', ուրեմն այսպէս . մի անգամ որ Կառլտսկու կինը «ինքը տեսել է», այդ Քաջագնունին ինչպիսի՞ ապուշ է, որ չի հաւատում թէ այդ ռազմամթերքը Հայաստանի դէմ գործածելու համար է եղած!...

Այսպէս են դաշնակները «պատմութիւն» գրում . եւ երբ այդպէս անելուց յետո գտնւում է մի Մարտունի, որ որոշու տեղին կերպով յայտարարում է թէ Դաշնակցութիւնը մարմնացումն է տխմարութեան, յիմարութեան եւ կեղծիքի, այն ժամանակ շատ վիրաւորւած են զգում նրանք: Եթէ պէտք կա վիրաւորւելու եւ բարկանալու, ապա պարոնայք Նաւասարդեաններին պիտի ուղղւին դրանք, քանի որ նրանց տխմարութիւնները եւ կեղծիքներն են, որ անխուսափելի են դարձնում այդպիսի համեմատութիւններ, եւ ո՛չ թէ Մարտունուն, որ առարկայական կերպով նկարագրում է իրողութիւնները:

Բայց այս ակամա շեղումից յետո վերադառնանք կրկին մեր տրտնջացող «սօցիալիստին»:

Նրա դառնութիւնը տիրան-բօլշեւիկների դէմ դեռ աւելի է աճում, երբ նա մտաբերում է ցարիզմի օրերը, իր կուսակցութեան «հերոսական, յեղափոխական գործունէութեան» օրերը, երբ («հազարաւոր դաշնակցականներով լեցուցեր էին բանտերն ու աքսորավայրերը» . եւ այսօր նա ոգեւորւած «փառաւոր անցեալով», սպառնում է Խորհրդային Իշխանութեան՝ Դաշնակցութեան «յեղափոխական կայծերով», որոնք պիտի դան թնդացնելու «վառօղով լեցուն ամբարները» եւ

ցոյց տալու թէ՛ «որպիսի հսկա ատելութիւն մը ամբարւած է» «մեր ժողովրդի հոգիին մէջ»:

Ռուս ցարին տւած՝ իր, ամենախոնարհ զեկուցման մէջ, նրա կովկասեան տեղապահը՝ Գրաֆ Վօրօնցով-Դաշկովը ճիշտ դաշնակցական հերոսական «յեղափոխական գործունէութեան» օրերին գրում էր թէ՛ 1905-6 թւի յեղափոխական պոռթկումներից յետո Դաշնակցութիւն հայ կուսակցութիւնը ցարական ոստիկանութեան հսկա օգնութիւն է ցոյց տալ՝ բնակչութիւնը հանդարտեցնելու գործում: Իսկ ցարական ոստիկանութիւնը, ինչպէս յայտնի է, «հանդարտեցրել» է բնակչութիւնը պատժական վաշտերի միջոցով, հրացանազարկութեամբ, աքսորավայրերով, տաժանակիր աշխատանքներով, բանտերով եւ Սիբիրայով:

Այդ խնդրում, պաշտօնական եւ բօլշեւիկեան լինելուց շատ հեռու աղբիւրների համեմատ, — աղբիւրներ, որոնք չէին կարող բարենպաստ լինել յեղափոխականների հանդէպ, — մենք իմանում ենք, որ Դաշնակցութիւնը ոչ աւելի է եղել, ոչ էլ պակաս, քան ցարական ոստիկանութեան դաշնակից: Ուրեմն էլ ի՞նչ թագնւած «յեղափոխական կայծերի» մասին է, որ խօսում է անանուներ:

Դրանք ամենաշատը ոստիկանական այն լուսիկներն են, որոնք ամենալաւ պարագայում կարող էին պէտքական լինել լուսաւորելու համար քրէական յանցապարտութեան բանտի այն խուցը, որտեղ, կեղծ վկայութեան համար երբ եւ իցէ պիտի նստեցնեն այնպիսի ազնիւ ամերիկացիների, ինչպիսին է Ռ. Դ. տառերի տակ թագնւած պարոնը:

Ե

ԶԱՅՐԱՑԱԾ ԱՍՊԵՏԸ ԵՒ ԻՐ ԿԵՂԾԱԻՈՐ ՀՐԱՑԱՆԱԿԻՐԸ (Շարունակութիւն)

Հազիւ թէ «սպառնալիքները» տւած, որոնք ըստ երեւոյթին մեր տրտնջացող «հեղինակի» բերնից դուրս թռան «գեղեցիկ խօսքեր» ասած լինելու մարմաջից դրդւած, խորամանկ հրացանակիրը շատ լաւ հասկանալով թէ որքան անժողովրդական է նոյն իսկ արտասահմանի հայ զանգւածների մէջ խորհրդային Հայ Իշխանութեան տապալման գաղափարը, սկսում է կեղծաւորութիւն անել:

Բօլշեւիկների արածին հակառակ «մենք իրենց պէս ապրստամբութիւններ չենք ձգտեր կազմակերպել Հայաստանի մէջ եւ ոչ ալ ոեւէ շահ կամ ցանկութիւն ունինք զէնքով պայ-

քարելու Սորհրդային Իշխանութեան դէմ» — գրում է նա, մոռանալով քիչ առաջ տւած սպառնալիքները: Աւելի՛ն դեռ: «Բազմաթիւ անգամներ մենք ըսած ենք եւ այժմ ալ պէտք կգգանք կրկնելու, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը պատրաստ է անվերապահօրէն ոյժ տալու Սորհրդային Կառավարութեան այն բոլոր քայլերուն եւ ձգտումներուն, որոնք իրապէս կը նսլաստեն Հայաստանի տնտեսական վերաշինութեան ու բարգաւաճման, ինչպէս նաեւ մեր ժողովրդի ազգային կուլտուրայի զարգացման»:

Բայց նախ՝ մեր «քննադատների» իսկ կարծիքով Սորհրդային Հայաստանի Կառավարութիւնը ոչինչ չի արել, ոչինչ չի կարողացել («բռնակալներու օտար ոյժ»!) եւ ոչինչ էլ չի ուզեցել («կուսակցութեան շահերը վեր կդասէ ժողովրդականէն»!) անել Հայաստանի վերականգնման եւ նրա «ազգային կուլտուրական զարգացման» համար: Երկու «հեղինակներն» էլ շատ մանրամասն կերպով ջանում են հաստատել այդ ամերիկահայ ընթերցողների առջեւ, երբեմն յուզումի արժանավայել պաթոսին տալով իրենց, երբեմն կոկորդիլոսի արցունքներ քամելով իրենց աչքերից: Հիմա ի՞նչպէս է, որ ճիշտ վերջաւորութեան մէջ դուրս է գալիս թէ դաշնակները պատրաստ են «անվերապահօրէն ոյժ տալու Սորհրդային Կառավարութեան», նրա որոշ քայլերին եւ ձգտումներին:

Այստեղ ինչ որ կասկածելի կերպով սկիզբը չի կապւում վերջաւորութեան հետ:

Եւ երկրորդ՝ ... ո՞ւր թռան «յեղափոխական կայծերը» եւ «վառօղի ամբարները», որոնք այնքան ահաբեկիչ էին երեւում քիչ առաջ:

Արդեօք այդ միջոցները պիտի գործածւի՞ն: Ի հարկէ՛. որովհետեւ «Հայրենիք»ի յօդաւածագիրը ասում է որ «պինդակաճ իր ատամները՝ հայ աշխատավորութիւնը ժամանակավորապէս միայն հաշտւել է գերագանց օտարի ոյժի լուծին հետ, մանաւանդ որ իր ետեւն ալ ունի տաճկական ահաւոր սպառնալիքը»:

Արդեօք պարոնայք Դարբինեանները նրա համա՞ր են որոնում «թրքական օրիննտացիա», որպէսզի, ինչպէս իրենք են կարծում, վերացնելով ահաւոր սպառնալիքը, «յեղափոխական կայծերը» եւ «վառօղի ամբարները» գործի դնեն:

Ինչի՞ էին պէտք ուրեմն այդ կեղծաւոր խօսքերը՝ «Սորհրդային Իշխանութեան ոյժ տալու» մասին՝ որոշ «քայլերու մէջ» . եւ ինչպէ՞ս հնարաւոր է դա Ֆիզիքապէս . ինչպէ՞ս կարելի է ոյժ տալ մի կառավարութեան՝ որոշ խնդիրներում եւ միաժամանակ ձգտել տապալել նրան, այն էլ զէնքի ոյժով:

Այդ «կրկնակ հաշւապահութիւնը» եւ երեսպաշտ խօսքերը պէտք են եղել նրա համար, որպէսզի հայ գաղութների արթնացած աշխատաւոր դանդաժները քնացնէին կրկին եւ մթութեան ու անշարժութեան մէջ «դաւաճանութեան ու դաւադրութեան» զէնքեր պատրաստեն, (այսպէս է բնորոշել դաշնակցական Դրօն Խորհրդային Հայաստանի թշնամիների արարքները) :

«Ահա, տեսէ՛ք, մենք էլ Խորհրդային Հայաստանի հանդէպ նպաստաւոր դիրք ունինք եւ նոյն իսկ կամենում ենք նրա բոլոր առաջադիմական ձգտումներին ոյժ տալ, միայն թէ այս չար բօլշեւիկները, որ «միայն իրենց կուսակցութեան» մասին են մտածում, փշացնում են ամեն բան» :

Այդպէ՞ս է, սակայն. չէ՞ որ մենք մի անգամ, աւելի ճիշտ՝ երկու անգամ (երկրորդը Զանգեզուրեան աւանտիւրայից յետո) լսել ենք այդ խօսքերը եւ տեսել դրանց համապատասխան գործերը :

Երբ 20 թւի Նոյեմբերին դաշնակները «կամովին կերպով» պետական իշխանութիւնը «յանձնեցին», որը արդէն նրանց ձեռքից ընկել էր փաստօրէն, նրանք միեւնոյն երգը գեղգեղեցին եւ միեւնոյն երկերեսանի խաղը սկսեցին :

Այդ օրերին Հանրապետութեան դրութիւնը իրապէս սուկալի էր. տաճիկները գրաւելով երկրի գլխաւոր կենդրոնները, բռնելով բոլոր ճանապարհները, անմիջապէս վտանգի տակ առնելով մայրաքաղաքը, յենւելով դաշնակների կողմից ստորագրւած Ալեքսանդրապօլի դաշնագրութեան վրա, պահանջում էին նրա գործադրութիւնը. այսինքն՝ հայ ժողովրդի եւ անկախութեան կատարեալ ոչնչացումը :

Հիւսիսից, վրաց ազգայնականները նոյնպէս յենւելով դաշնակների հետ ունեցած «ժամանակաւոր» համաձայնութեան վրա, գրաւելով ամբողջ Լօռին, բռնութեան միջոցով այնտեղ իրենց վարչութիւնը հաստատելով, առաջ էին շարժում դէպի Կարաբիլիսէ, իրենց «պետական սահմանները որոշելով Զաջուրի լեռնանցքից (պերեվալ) սկսած : Տեղական թաթարները, որոնք այնքան շատ տուժել էին դաշնակ կառավարութիւնից (Աղ-Բարա, Զանգի-Բազար, Վեդի-Բազար, Եւայլն) պատրաստւում էին սոսկալի վրիժառութեան՝ արդէն անպաշտպան մնացած ժողովրդից : Բարեկամ Խորհրդային Ռուսաստանը սկզբնական օրերին համարեա անկարող էր անմիջական օգնութիւն հասցնելու Հայաստանին, թէ հեռաւորութեան եւ թէ նաեւ այն պատճառով, որ Հայաստան տանող միակ երկաթուղային գիծը վրացի ազգայնականների ձեռքումն էր, որոնք Հայաստանի համար հացով

եւ նաւթով բեռնւած գնացքները վար էին դնում, էլ չխօսած
այն մասին, որ ոչ ուղղամթերք եւ ոչ էլ զօրաբաժիններ
թոյլ չէին տալիս Հայաստան մտնելու:

Այդ անմարդկային պայմանների տակ կոմունիստները
դաշնակներից «ստացան» իշխանութիւնը, որին այսօրւա պէս
իրենց օժանդակութիւնն էին խոստացել:

Բայց նրանք ի՞նչպէս իրագործեցին իրենց «օժանդակու-
թիւնը». ազգայնական վրաստանի կառավարութեան եւ
տանկական գործակալների հետ միասին նրանք շահագործե-
ցին երկրի անչափօրէն դժւարին կացութիւնը եւ փետրվարին
կազմակերպեցին զինւած ապստամբութիւն, նպատակ ունե-
նալով իշխանութիւնը ձեռք ձգել:

Իսկ ի՞նչ դրութիւն գոյութիւն ունէր դաշնակների ա-
պրաստամբութիւնից առաջ:

Ո՛չ միայն ամեն կոմունիստի, այլ եւ ուղղակի ամեն ազ-
նիւ մարդու համար պարզ էր այդ ժամանակ, որ տրւած սար-
սափելի դրութեան մէջ միակ ելքն էր անմիջական յարաբե-
րութիւն սկսել խորհրդային Ռուսաստանի հետ, որ միակ
վստահելի դաշնակիցն էր, բանալ ճամբաները, եւ նրա նիւ-
թական ու բարոյական օգնութեամբ դէն շարտել օկուպա-
ցիայի եւ շրջափակման լուծը. այլապէս երկիրը պիտի խեղ-
դէր, ոչնչանար:

Դաշնակները այդ չուզեցին եւ չէին կարող անել, որով-
հետեւ մէկ հատիկ դաշնակից կամ բարեկամ չունէին: Կո-
մունիստները կարող էին անել այդ, եւ արին:

Հայաստանում խորհրդային Իշխանութեան հաստատ-
մամբ զանգւածների յեղափոխական էներգիան արթնացաւ,
եւ հենց առաջին պատեհութեամբ Լօռու աշխատաւոր գիւ-
ղացիութիւնը, որ տաճկական մուրճի եւ վրացական սալի
միջեւ ճնշւած էր, ոտքի կանգնեց շահագործողների եւ բրո-
նակալների դէմ՝ դէնքը ձեռք առնելով:

Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը ոյժ տւաւ
Լօռեցիների այդ շարժումին, աւելի եւս, որ այդ շարժման
յաջողութեամբ կարելի պիտի լինէր վերականգնել երկաթու-
ղային միակ կապակցութիւնը, որով եւ կապահովւէր Խոր-
հրդային Ռուսաստանի նիւթական օգնութիւնը, որ դաշնակ-
ների «օժանդակութիւնից» մի փոքր տարբեր բան էր եւ ա-
ռանց որի, նոյն իսկ դաշնակների խոստովանութեամբ, ան-
կարելի էր այլեւս գոյութիւն պահպանել:

Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը անմիջա-
պէս իր հայկական զօրավաշտերը շարժեց՝ օգնութեան հաս-
նելու համար ապստամբներին. ազգայնական վրաստանի կա-
ռավարութիւնը, որ իր նախագահ Ն. Ժօրգանիայի բերնով

պարլամենտի մէջ յայտարարել էր թէ «հայ ժողովուրդը սովորել է միայն փախչիլ» եւ թէ «նրան պէտք է պատժել», ձգեց իր զօրաբանակը, որ ուժեղացած էր չօվինիստական տրամադրութիւններով տողորւած ազնականների վաշտերով, եւ Լօռին թողեց Խորհրդային Հայաստանին: Խորհրդային Ադրբէյջանի բարեկամ կառավարութիւնը տեսնելով եղբայրական Հանրապետութեան դժւարին կացութիւնը եւ ազգայնական Վրաստանի հարւածների տակ նրա անկման վտանգը, Վրաստանին պատերազմ հրատարակեց, իր ուժերը ուղարկեց ուղղակի դէպի Վրաստանի մայրաքաղաքը՝ Թիֆլիս, եւ այդպիսով մեղմացրաւ Հայաստանին հասնելիք հարւածը: Տաճկական զօրքերի հրամանատարութիւնը կովկասում լաւ հասկացաւ, որ Խորհրդային Հայաստանի եւ Ադրբէյջանի յաղթանակը պիտի նշանակէր Խորհրդային իշխանութեան հաստատում նաեւ Տաճկաստանի մէջ, վերջինիս ճակատ-ճակատի կանգնեցնելով Խորհրդային հզօր Ռուսաստանի դէմ. նա հասկացաւ նաեւ, որ այդպիսով ո՛չ միայն անկարելի պիտի դառնար տաճիկների առաջխաղացքը Անդրկովկասում, այլ եւ նրանք ստիպւած պիտի լինէին յետ նահանջել մինչեւ իրենց նախնական, ելման դիրքերը: Բնական էր, որ տաճկական հրամանատարութիւնը վախենալով բացայայտ կերպով Ռուսաստանի դաշնակից Հայաստանի եւ Ադրբէյջանի դէմ գնալու, սկսեց կրկնակի մի խաղ՝ խոստանալով վրացիներին օգնութիւն Խորհրդային հանրապետութիւնների դէմ, կազմակերպելով ապստամբութիւններ Ադրբէյջանում եւ Դաղստանում, եւ Հայաստանում դաշնակներին խրախուսելով դէպի այդպիսի ապստամբութիւն:

Հայաստանի համար եկաւ «դարձ-վայրկեանը». պատմական փարտէզի վրա դուրեց ամբողջ հայ ժողովրդի կեանքի եւ պահպանման, ինչպէս եւ ամբողջ ազգի կու՛լտուրայի ապագայի խնդիրը, այն է՝ կամ ընդառաջ գնալ եւ մօտենալ Ռուսաստանի ու Ադրբէյջանի եղբայրական հանրապետութիւններին եւ կամ ոչնչանալ տաճկական գրաւման ու վրացական պաշարման ճիրաններում:

Ի՞նչ արին, սակայն, դաշնակները հայ ժողովրդի ճակատագրի համար վճռական նշանակութիւն ունեցող պատմական այդ վայրկեանին:

Երբ Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների Խորհուրդը լաւ հասկանալով որ հայ ժողովրդի ողբերգութեան «վերջին ակտն» էր կատարւում, որ այդ ժողովրդի բոլոր ուժերի գերմարդկային լարումն էր պահանջւում՝ պատուով դուրս գալու համար հսկա փորձութիւնից, իր բոլոր զինւած ուժերը Հայաստանի սահմանների վրա էր

դնում, իրեն եւ Երեւանը անպաշտպան թողնելով, — երբ, ասում ենք, Կօմիսարներին խորհուրդը այդ էր անում, ինչո՞վ էր զբաղւած Դաշնակցութիւնը. նա թրքական զօրքերի գործակալ Բահադին-Բէյի հետ միասին եւ վրաց ազգայնականների հետ համաձայնաբար Երեւանի մէջ զինւած ապստամբութիւն էր սարքում եւ ժամանակաւորապէս մայրաքաղաքի մէջ խորհրդային Իշխանութիւնն էր տապալում:

Ի՞նչ բառերով որակել այս: Երբ երկիրը իր վերջին ճակատամարտն էր տալիս ազատութեան եւ անկախութեան համար, անցնել նրա դարեւոր թշնամիների կողմը — ի՞նչ անուն տալ սրան:

Նոյն իսկ այդ պայմաններում, ժողովրդական շահերի անհաւատալի դաւաճանութեան օրերում, խորհրդային Իշխանութիւնը Հայաստանում յաղթանակ էր տանում, ճեղքում էր վրացական շրջափակումը, բանում էր ազատ ճամբա դէպի խորհրդային Ռուսաստանը, եւ այդպիսով սահման էր դնում թրքական գրաւման, վերջ էր տալիս փաշաների կօնտրոլին եւ հիմք էր ստեղծում Ալեքսանդրապօլի դաշնագրութեան վերաքննութեան:

Գուցէ դաշնակները այդ ժամանակ հասկացա՞ն իրենց ոճրագործութիւնը եւ զղջացին:

Վրաստանը արդէն խորհրդային Հանրապետութիւն էր. Հայաստանի, Ադրբէյջանի եւ Ռուսաստանի միացեալ զօրքերը Վրաստանի աշխատաւորների հետ միասին հիմնաւորում էին յաղթանակը: Յաղթանակը պահանջում է մեծահոգութիւն: խորհրդային Իշխանութիւնը չուղեւով աւելորդ արիւնհեղութիւն, Երեւան է ուղարկում ամենամարդկային եւ բարեմիտ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանին, առաջարկելով դաշնակներին՝ վերջ տալ անիմաստ դիմադրութեան եւ վար դնել զէնքերը, խոստանալով «բոլոր մեղքերը մոռանալ». դաշնակները ժողովրդից թազցնելով Յ. Թումանեանի բերած խաղաղութեան առաջարկը, գրկում են նրան ազատութիւնից եւ նրա անունով կեղծ հեռագիր են ուղարկում:

Այդ ժամանակ դաշնակ կառավարութեան գլուխ կանգնած Վրացեանը թուրք ներկայացուցիչ Բահադին-Բէյի հետ միասին «չըջում էր դիրքերը», խաբւած եւ մոլորւած ապստամբներին նորից խաբելով թէ՛ «Վրացիները Թիֆլիսի մօտ ջարդել են խորհրդային զօրքերը», թէ՛ «Ադրբէյջանում եւ Դաղստանում արդէն տապալւած է խորհրդային Իշխանութիւնը» եւ թէ՛ «դաշնակից թուրքերը օգնութեան են գալիս»:

Իսկ երբ հայ զինւորները եւ գիւղացիները ձանձրացած Երեւանեան այդ վօղըվիլից, որ տեղի կունենար «հանդերձափոխութեամբ», Երեւանից քշեցին դաշնակներին, սրանք

նախ անմահացրին իրենց յիշատակը Տաթևի ժայռերի վրա անդէն պատանդների սպանութեան սոսկալի նախճիրը ստեղծելով, ապա փախչելով պարսկական, Ղարաբաղի խան Ամիր-Արշադի մօտ, նրան նւիրեցին Երեւանից տարած հայկական ռազմամթերքը, զէնքերը, քնդանօթները, եւայլն, որպէս հատուցում «հիւրասիրութեան» համար:

Բայց դաշնակները պարսկական խաների հովանաւորութեան տակ ընկնելուց յետոյ էլ, զգալով որ հայ ժողովուրդը երբէք չպիտի ների իրենց վերջին սոսկումը, սկսեցին միեւնոյն երգը, ինչ որ այսօր երգում է «Հայրենիք»ի հրացանակիրը. —

«Հաւատացէ՛ք մենք մեղաւոր չենք ապստամբութեան մէջ, այդ ժողովուրդը ինքն առաջացրեց. մենք նոյն իսկ հակառակ էինք դրան եւ խոստանում ենք Խորհրդային Իշխանութեան ոյժ տալ նրա բոլոր քայլերին մէջ, որ ժողովրդի օգտին տեղի կունենան» (համեմատել Ս. Վրացեանի նամակը՝ Հայաստանի Կառավարութեան նախագահ Ս. Սրաբիօնեանին, — Լուկաշինին):

Իսկ երբ Խորհրդային Կառավարութիւնը այդ գետնի վրա իր պատւիրակ Ար. Կարինեանին Դ. Անանունի եւ ուրիշ ոչբօլշէւիկ հասարակական գործիչների հետ միասին ուղարկեց Չանգեզուր, այլեւս դաշնակների համար ամեն իմաստ կորցրած դիմադրութիւնը վերջացնելու համար առաջարկով, տալով կատարեալ ներում եւ երաշխատւորելով այդ խոստումը ապստամբների զէնքերը իրենց վրա թողնելով եւ Խորհրդային զօրքերը Չանգեզուր չմտցնելով, այն ժամանակ Դաշնակցութիւնը մի կողմից շարունակեց բանակցութիւնները, իսկ միւս կողմից էլ նենգօրէն ու դաւաճանաբար Կարմիր Բանակի վրա յարձակւեց, — անշուշտ, այդ վայրկեանին իրենց գլխաւորները զգուշաբար Արաքսի այն կողմը ձգելով եւ Ամիր-Արշադի «հիւրասիրութիւնը» վայելելով:

Պատմական մի ուրիշ մանրամասնութիւն եւս:

Ռուս-թրքական խորհրդաժողովը հաւաքւել էր Մօսկւայում ճիշտ Փետրվարեան «ապստամբութեան» օրերին: Խորհրդաժողովին՝ Ռուսաստանի ցանկութեամբ պիտի գտնւէր նաեւ Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործոց Ժողովըրդային Կօմիսարը: Թուրքերը սոսկալիօրէն վախեցին դրանից եւ չկամեցան, որովհետեւ այդ դէպքում Հայաստանի օրինական կառավարութեան հարցերը իրենց ամբողջութեամբ այնպիսի պայմանների մէջ կդրւէին, որ Խորհրդային Ռուսաստանի աջակցութիւնը ապահովւած կլինէր: Միակ բանը, որ կարող էր օգնել թուրքերին, դա Խորհրդային Հայաստանի Իշխանութեան ժամանակաւոր վերացումն էր,

որովհետեւ այդպիսով նրա ներկայացուցչի լիազօրութիւնը ոչնչացրեաժ կլինէր Մօսկւայի Խորհրդաժողովի մէջ: Այդ դէպքում հայ-թրքական յարաբերութիւնները որոշող օրինական ակտը կմնար Ալեքսանդրապօլի ամօթալի եւ խայտառակ դաշնագրութիւնը, որ Հայաստանը դնում էր թրքական փաշաների ոտների տակ:

Վրացեանի «Փետրվարեան ապստամբութեան» դաշնակ կառավարութիւնը կատարելապէս իրականացրաւ թրքական այդ ծրագիրը. նա հեռագրեց Մօսկւա, որ Հայաստանի ներկայացուցիչ Ալեք. Բէկզադեանի մանդատը ջնջւած է այլեւս եւ այդպիսով թուրքերին օրինական հիմք տւաւ պահանջելու, որ Հայաստանի ներկայացուցիչը չմասնակցի Խորհրդաժողովի աշխատանքներին, որից յետո, բնականաբար, սրբագործեց Ալեքսանդրապօլի դաշնագիրը որպէս միակ, օրինական հիմք՝ հայ-թրքական յարաբերութիւնները որոշող:

Ահա՛, այսպէս իրականացրին դաշնակները Խորհրդային Հայաստանին օգնելու իրենց խոստումը:

Ո՞վ կարող է այսօր այլեւս հաւատալ «Հայրենիք»ի «գլխավորներին» կեղծաւոր հաւաստիացումներին, երբ այդ խարդախ խօսքերի գրի առնելու պահուն՝ պարոնայք Վարանդեանները միեւնոյն Ն. Ժօրդանիայի գործակալների հետ միասին մաշում են եւրոպական բոլոր բուրժուական երկրների շէմքերը եւ պահանջում են զինւած միջամտութիւն՝ Խորհրդային Հայաստանի եւ Անդրկովկասեան Խորհրդային Ֆեդերացիայի գործերի մէջ:

Ո՞վ կարող է հաւատալ, կրկնում ենք մենք, այդ երկերեսանի մարդկանց, նրանից յետո, երբ նրանք երկու անգամ խօսք են տւել, դրժել իրենց խօսքը ամենախայտառակ եղանակով եւ հայ ժողովուրդը կորստի ու ոչնչացման անդունդի բերանը տարել:

Այդ բոլորից յետո բօլշեւիկները իրաւունք չունի՞ն ասելու Դրօյին եւ իր ընկերների պէս մարդկանց որոնք ճամբաների բաժանման կէտումն են կանգնած, թէ՛ նախ թօթափեցէք ձեր վրայից Դաշնակցութեան ամօթալի անունը, որը երեսուն տարի շարունակ եղել է հոմանիշ դաւաճանութեան եւ կեղծիքի՝ ուղղւած հայ ժողովրդի դէմ:

Խորհրդային Իշխանութեան վերջնական հաստատումով աշխատաւոր հայ ժողովուրդը այլեւս հանդիստ չունի քաջեց Հայաստանում. դաւադրութիւններին եւ դաւաճանութիւններին վերջ տրւեց անդառնալի կերպով: Դաշնակցութեան մաքուր եւ լաւագոյն անդամները, նրա աշխատաւոր տարրերը, որոնք իրենց համահայկական համագումարում հա-

ւաճել էին «ագատութեան եւ անկախութեան» դրօշի տակ, կուսակցութեան քայքայման պրօցեսը կատարեալ են դարձրել, ազդարարելով որ նա լուծւած է:

«Հայրենիք»ի յօդւածագիրը փորձում է բացատրել այդ քայքայման պատճառները: Բայց վերջ ի վերջո կարելոք այն չէ թէ ինչու քայքայոււմ է Դաշնակցութիւնը, այլ քայքայման սոսկական իրողութիւնը, — այն, որ կուսակցութիւնը որպէս այդպիսին լուծուում է, նոյն իսկ դաշնականների խոստովանութեամբ, այն, որ նա հայ ժողովրդի մէջ, երկրում դադարել է գոյութիւն ունենալուց, եւ որ ժողովուրդը անիծում է այն օրը, երբ այդ կուսակցութիւնը իշխանութեան գլուխ էր կանգնած:

Ճիշտ է, երկերեսանի յօդւածագիրը ջանում է կարդալ մարդկանց «հոգիները» եւ տրամադիր է ընդունելու, որ դաշնակ դադարեալը մնում է տակաւին ժողովրդի «հոգւոյն մէջ», որը խնամում է նրան չար Չեկայի նենգութիւնների դէմ:

Բայց յայտնի է, որ «հոգիները կարդալը» այնքան էլ դիւրին գործ չէ մարդկանց համար. նոյն իսկ եթէ նրանք «Հայրենիք»ի վհուկների խմբակին պատկանին: Չէ՞ որ ժամանակին այդ վհուկները հայ դիւղացիներին խաբելով, դիւղական փալչիների պէս «կարդացին» նաեւ Լօյդ Չօրջի, Կլեմանսօի եւ ուրիշ «մեծամեծների» «հոգիները»: Եւ սակայն ի՞նչ եղաւ հետեւանքը. այն, որ տակաւին երկու տարին չբոլորած, փալչիների բոլոր խաբեքայութիւնները երեւան եկան:

Կարող է պատահել, որ Ամերիկայում դաշնակցական «րեպերտուարի» այդ կտորը դեռ հանդիսատեսներ ունենա, սակայն Դարալագեազի յետընկած անկիւններից մէկումն անգամ դա չի անցնիլ այլեւս:

«Հոգու» «դեգերումները» անսխալ կերպով ցուցահանւում են միայն գործնական կեանքի մէջ. այդպէս, օրինակ, դաշնականների դաւաճանական «հոգին» երեւցած է այն սիստեմատիկ դաւադրութիւնների մէջ, որ նրանք յայտնաբերել են հայ աշխատաւոր մասսաների շահերի դէմ. իսկ վերջիններս իրենց «հոգեկան համակրանքը» յայտնած են դաշնականներին նրանով, որ սրանց «վզակոթին տալով» դուրս են քշել Հայաստանից, երեք տարւա ընտրութիւնների ժամանակ ոչ մէկ հատ դաշնակի չեն ընտրել եւ «նախկին դաշնականների համագումարով» նրանց դադաղի մեխերն են զարնել:

Կօմունիստները երբէք չեն կուլել դաշնականների դէմ, մա-

նաւանդ այն աշխատաւոր տարրերի դէմ, որոնք խաբէութիւններով այդ կուսակցութեան մէջ են բերւել: Կոմունիստները կուել են Դաշնակցութեան դէմ՝ որպէս հայ բուրժուազիայի ագրեսիւ ձգտումների գաղափարաբանական եւ քաղաքական արտայայտութեան:

Եւ բոլոր նրանք, որոնք այսօր Դրօյի, Խ. Կազազեանի պէս, ինչպէս եւ Վրաստանի կենդրոնական Կոմիտէի ու միւսների նման կանգնել են ու կանգնում են դաշնակցական գաղափարաբանութիւնից հրաժարւելու գետնի վրա եւ որոնում են հասկացողութեան մի ընդհանուր լեզու հայ աշխատաւոր ժողովրդի հետ, — բոլոր նրանք, որ իրենց վրայից պատրաստ են թօթափելու հին կեղտոտ փոշին, ինչպէս արել են այդ դաշնակների «բուտիմայի» հետ աւելի թոյլ կերպով կապւած նրանց ընկերները Երեւանեան Համագումարի մէջ, կդառնան հայ բանւորների եւ գիւղացիների ընտանիքի հարազատ անդամները, որտեղից նրանք դուրս են կորզւել հայ ագրեսիւ բուրժուազիայի նիւաններով:

Խորհրդային Իշխանութիւնը ո՛չ միայն յետ չի մղել Դրօյի եւ ընկերների մեկնած ձեռքը (ինչպէս ուրախանում է Ռ. Դ. —ը), այլ ընդհակառակը ամեն կերպ աջակցել է որպէսզի հայ ժողովուրդը կարողանա մաքուր սրտով սեղմել այդ ձեռքը, առանց անցեալ վէրքերը եւ դաւաճանութիւնները վերյիշելու:

Ուրախութեամբ անջատւելով մեր «արժանավայել» զոյգից», — զայրացած ասպետից եւ նրա երեսպաշտ հրացանակրից, — մենք չենք կարող թագցնել ցաւակցութեան մեր մի զգացումը. ի հարկէ ընկ. Ալ. Մարտունու քննադատներին մեր հարկադրւած պատասխանը առիթ պիտի տա դաշնակ «գրողներին» կրկին անգամ գրիչ վերցնելու, համբերատար թղթի վրա աջ ու ձախ խազխզելու եւ կրկին անգամ օդը լցնելու քայքայւող դիակի գարշահոտութեամբ, կեղծիքով եւ խաբէութեամբ:

Ի՞նչ արած. այդ խայտառակ հետեւանքի հետ պիտի հաշտւել. եւ մենք կարող ենք այժմեանից իսկ ներողութիւն խնդրել այն ընթերցողներից, որոնց վիճակւած պիտի լինի կարդալ զայրացած ասպետների եւ կեղծաւոր հրացանակիրների յետագա «գրութիւնները»:

Միայն կրաղձայինք մեր «պատւարժան» քննադատներին իրենց ապագա «աշխատանքների» համար յիշեցնել ոռւս ժողովրդական մի առածը, որ ասում է.

«Ստի'ր, բայց չափն իմացիր»:


[504.]

— 46 —

A $\frac{II}{53745}$

Եթէ պարոն Ռ. Դ.-ը ուսերէնի ոգին լաւ չի հասկանում
թող դիմի «Հայրենիք»ի խմբագիրը պըն. Դարբինեանին եւ
այդ առածի իսկական իմաստը հասկանա. մեծապատիւ այդ
խմբագիրը Ռուսաստան եւ Կովկաս եղած ժամանակ շատ յա-
ճախակի լսած է այդ խօսքերը, իրեն ուղղւած իր ծանօթնե-
րի եւ «բարեկամների» կողմից:

1 Ապրիլի, 1924 թ. Վիեննա.



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220053745